

ԳԷՈՐԳ ԵԱԶԸՆԵԱՆ

**ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ**  
**ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ**  
**2002 ԹՈՒԱԿԱՆԻՆ**  
(ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐԻ ՓՈՐՁ)

ԵՐԵՎԱՆ 2004

01  
2-11

Սիրով << ԳԱՍԽ Սերժանյան-Սիրան  
խնայող զբոսայգի  
ԳԵՈՐԳ ԵԱԶՆԵԱՆ ԿԶ

*Գ. Եսայան*

Սեպտեմբեր, 14 ՊԿԿԶ. 2004

**ԼԻԲԱՆԱՆԱԴԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ  
ՍԱՍՈՒԸ 2002 ԹՈՒԱԿԱՆԻՆ**

**(ՆՈՒՄՈՒՐ.ՈՐՊԱՏԿԵՐԻ ՓՈՐՉ)**

3:



01	3358
2-11	Նապրեկան Գեորգ
	Լիբանանայ
	պարբերական հատված
	2002 թ.թ. 2004թ



ԴՏԴ 002 (03)  
ՊՄԴ 76. 12 ց 2  
Ե - 110

Ե - 110 Եազըճեան Գ.  
«Լիբանանահայ պարբերական մամուլը 2002 թուականին  
(համայնապատկերի փորձ)»,-Եր.: Դեղինակային  
հրատարակութիւն, 2004, 47 էջ:

Գրքոյկում ներկայացում են 2002թ. Լիբանանում լոյս տեսած շուրջ 50 հայկական պարբերականների մատենագիտութիւնը եւ կապի տունեւլները, Լիբանանի «Դրատարակութեան օրէնքի» հիմնական դրոյթները, Լիբանանի խմբագիրների արհմիութեան հայ անդամների ու Լիբանանում հայոց պատկանող արտօնագրուած պարբերականների ցուցակներ, ինչպէս նաեւ լիբանանահայ ժամանակակից մամուլին առնչուող զանազան տեղեկութիւններ:

Նախատեսուած է հայ մամուլի հրատարակիչների, խմբագիրների, լրագրողների, լիբանանահայ մամուլի, դպրոցի եւ առհասարակ զաղթօջախի ու հայ մամուլի պատմութեամբ հետաքրքրուողների համար:

4502020000

Ե ————— 04

703 (02) – 04

ISBN 99930-4-293-5

© Գեորգ Եազըճեան, 2004

## ԼԻԲԱՆԱՆԱԿԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ 2002 ԹՈՒՎԱԿԱՆԻՆ (ՀԱՄԱՅՆԱԿԱՑԿԵՐԻ ՓՈՐՁ)<sup>1</sup>

### Նախաբան

Պարբերական մամուլը, տեղեկատուութիւն փոխանցողի իր գործառոյթներուն կողքին, տարեգիր է, հասարակական կարծիք ձեւաւորող եւ զայն արտայայտող միջոց, կազմակերպիչ, եւ այլն: Մէկ խօսքով՝ մամուլը հասարակական կեանքի հայելին է, աւելին՝ նոյնինքն անբաժան մասնիկը այդ կեանքին:

Այս դատողութիւնները ճիշդ են նաեւ լիբանանահայութեան եւ լիբանանահայ մամուլի փոխառնչութիւններուն համար:

Լիբանանահայ մամուլի աւելի քան 90-ամեայ պատմութեան եւ անոր մատենագիտութեան գծով պատմա-բանասիրական շնորհակալ աշխատանքներ կատարած են հայրենի թէ սփիւռքահայ ուսումնասիրողներ: Անոնց մէջ կ'առանձնանան Արտաշէս Տէր-Խաչատուրեանը եւ Ժիրայր Դանիէլեանը: Արժանաշիշտակ Արտաշէսը վաղաժամ հեռացաւ այս աշխարհէն, երբ դեռ տալիք չա'տ բան ունէր: Ժիրայր Դանիէլեանի պարագային, կը յուսանք, որ ան շուտով կը վերադառնայ իր ամենասիրելի զբաղումին, այլեւ՝ իր բուն կոչումին՝ հայկական պարբերական մամուլի եւ

<sup>1</sup> Սոյն ուսումնասիրութիւնը կատարուած է Մարտ-Ապրիլ 2003-ին եւ անմիջապէս փոխանցուած Պէյրութի «Ձարթօնք» օրաթերթին առ ի հրատարակութիւն: Սակայն, մեզի համար անյայտ պատճառներով, մինչեւ Դեկտեմբեր 2004-ը անիկա տակաւին լոյս չէր տեսած, ինչը մղեց մեզ՝ զայն առանձին գրքոյկով հրատարակելու՝ այն համոզումով, որ այսպիսով աւելի՛ հնարաւորութիւն կ'ունենանք օգտակար ըլլալու զբաղարանավարներուն, հայ պարբերական մամուլի աշխատողներուն, հայ մամուլով հետաքրքրուողներուն եւ, առհասարակ, հայ ընթերցողին: Կը վերահրատարակուի բնօրինակի չնչի փոփոխութիւններով:

գրադարատարակութեան պատմա-բանասիրական որոնումներուն, ձերբազատուելով այս աշխատանքին նուիրուելու կաշկանդումներէն:

Առանձին բաժիններով պիտի աշխատինք ներկայացնել 2002 թուականին թէկուզ մէկ թիւ լոյս տեսած լիբանանահայ պարբերականներու մասին մատենագիտական տեղեկութիւններ, հաղորդակցական կապի տուեալներ, Լիբանանեան Մամլոյ Միութեան հայ անդամ-խմբագիրներու ցուցակը եւ այլ անհրաժեշտ տեղեկութիւններ:

Չրատարակութեան յանձնելով այս շարքը, հեռու ենք զայն ամբողջական ու անսխալ համարելու յաւակութենէն: Ընդհակառակը, կանխաւ գիտենք, որ շարքին մէջ կան բացթողումներ, ոչ վերջնականապէս ճշդուած տեղեկութիւններ: Կանխաւ շնորհակալութիւն կը յայտնենք, բոլոր անոնց, որոնք այս շարքը աւելի՛ կատարեալ տեսնելու անկեղծ ցանկութեամբ, գրաւոր կերպով կը կատարեն ուղղումներ, լրացումներ եւ, ինչո՞ւ չէ, քննադատութիւններ: Մտադիր ենք, նիւթականը ապահովել ետք, շարքը հրատարակել առանձին գրքոյկով:<sup>2</sup>

Մեր այս աշխատանքը յետագային եւս կրնայ օգտակար ըլլալ լիբանանահայ մամուլի, լիբանանահայ դպրոցի եւ, առհասարակ, լիբանանահայ գաղութի պատմութեամբ հետաքրքրուողներուն, հայկական կարողակամութիւններու տեղեկատուական շտեմարան կազմողներուն համար:

Ընդհակալութիւն կը յայտնենք երբեմնի *«Նոր Կեանք»* պարբերականի խմբագիր եւ հրատարակիչ Պր. Մամուլ Գազանճեանին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սատենադարանի վարիչ Գեոր. Տ. Վարդան Արք. Տեմիրճեանին,<sup>3</sup> Գ. Բ. Ը. Մ.-ի Դարուհի-Յովակիմեան երկրորդական Վարժարանի տնօրէն Պր. Ժիրայր Դանիլեանին, «Սփիւռք» պարբերականի խմբագրութեան

<sup>2</sup> Ինչը եւ սոյն գրքոյկով կ'իրականացնենք:

<sup>3</sup> Վարդան Արքազանը վախճանեցաւ 9 Սեպտ. 2004-ին, երբ ինք ալ, Ա. Տեր-հաչատուրեանի նման, դեռ տալիք ուներ բոլորիս:

անդամ, լիբանանահայ շարք մը թերթերու մատենագիտութեանց հեղինակ Պր. Սազօ Օզնայեանին, որոնք մեծապէս օգտակար եղան մեզի՝ անհրաժեշտ պարբերականներն ու նիւթերը դնելով մեր տրամադրութեան տակ: Այսուհանդերձ, մեր աշխատանքի բուն աղբիւրները նոյնինքն իրենք են՝ Լիբանանի հայկական պարբերականները:

## Ա. Գլուխ

### ԼԻԲԱՆԱՆԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐՈՒ ԱՐԴԵՍԱՎԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԴԱՅ ԱՆՊԱՍՆԵՐԸ

Լիբանանի 14 Սեպտեմբեր 1962-ի «Չրատարակութեանց Օրէնք»-ին համաձայն, պետութեան, աւելի ճիշդ՝ Տեղեկատուութեան Նախարարութեան կողմէ արտօնագրուած իւրքանչիւր պարբերական հրատարակութիւն պարտաւոր է պատասխանատու տնօրէն (*«մուտիր մասու'ուլ»*) ունենալ: Ան, յաշս պետութեան, առաջին պատասխանատուն է տուեալ պարբերականի բովանդակութեան համար: Անոր անունը ԱՆՊԱՍՄԱՆՕՐԻՆ պէտք է նշուի պարբերականի հրատարակութեան տուեալներու ցուցակին մէջ: Աւելի քան քառասանամյա, բայց տակաւին գործող օրէնքը չի պարտաւորեցներ պատասխանատու տնօրէնին կեցութիւնը Լիբանանի տարածքին, ոչ ալ իմացութիւնը այն լեզուին (լեզուներուն), որով լոյս կը տեսնէ տուեալ պարբերականը:

Ստորեւ կը ներկայացնենք Լիբանանի խմբագիրներու Արհեստակցական Միութեան (*«Նիքապաթ ալ-Մուհարրիրին»*) հայ անդամներուն ցանկը՝ 2002-ի վերջի դրութեամբ, այնպէս ինչպէս տակաւին անոնք առկայ են միութեան ցուցակին մէջ: Ցանկը բերուած է անձնագրային տուեալներով՝ մակամուններու այրութեանական շարքով:

1. **Պարոյր Աղապչեան.** Ռամկավար Ազատական Կուսակցութեան «Ձարթօնը» օրաթերթի պատասխանատու տնօրէնն ու գլխաւոր խմբագիրն է: Նախապէս խմբագրած է Գայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Լիբանանի Շրջանային Վարչութեան «Ժուսնակ» պաշտօնաթերթը:

2. **Յակոբ Աւետիբեան.** Շուրջ մէկուկէս տասնամեակ խմբագրած է «Ձարթօնը» օրաթերթը՝ սկիզբը որպէս օգնական խմբագիր, իսկ 1981-ին խմբագիր Գերսամ Ահարոնեանի մահէն ետք՝ յաջորդած է անոր: 1990-ի սկիզբը հաստատուած է Երեւան, ուր 16 Փետրուար 1991-էն առ այսօր գլխաւոր խմբագիրն է Գայաստանի Ռամկավար Ազատական Կուսակցութեան «Ազգ» յայտարարուած պաշտօնաթերթին, սկիզբը՝ եռօրեայ, 1 Սեպտեմբեր 1992-էն օրաթերթ (աւելի ճիշդ՝ շաբաթը հինգ անգամ):

3. **Արթին Գազանճեան.** Մասնագիտութեամբ բժիշկ է: Ծանօթ է Յարութիւն Գեղարդ գրական անունով: Արտագաղթած է Լիբանանէն: «Գամազգային»-ի «Քազին» գրական ամսագիրին պատասխանատու տնօրէնն է:

4. **Կարապետ Գազանճեան.** Ներկայիս ընդհատուած կամ դադրած «Նոր Կեանք» պարբերականի համահիմնադիրն է եւ անոր երկու արտօնատէրերէն մէկը: Արտագաղթած է Լիբանանէն:

5. **Մանուկ Գազանճեան.** «Նոր Կեանք»-ի վերջին տարիներու հրատարակիչն ու խմբագիրն էր: Պարբերականի երկու արտօնատէրերէն մէկն է իր Կարապետ եղբոր կողքին:

6. **Կարապետ Գրորբեան.** Եղած է Մերձաւոր Արեւելքի Գայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան «Ձանատը» թերթին արտօնատէրը: Վաղուց ճահագած է, սակայն անունը պահպանուած է արմիտիւբեան ցուցակին մէջ:

7. **Ժիրայր Գրբեան.** Եղած է 1990-ականներուն լոյս տեսած եւ ներկայիս ընդհատուած կամ դադրած «Արին» ամսագիրին պատասխանատու տնօրէնը:

8. **Արիստոտ Գրբշբեան.** Արմիտիւբեան ապրող հնագոյն հայ անդամն է: Ծանօթ է Գրանդ Գանգրունի գրչանունով: Սոցիալ-

Դեմոկրատ Գնչակեան Կուսակցութեան «Արարատ» օրաթերթի (2001-ի Յունիսէն շաբաթաթերթ) պատասխանատու տնօրէնն է:

9. **Գեորգ Եազըճեան.** Գայկական ժողովրդային Շարժումի Լիբանանի մասնաճիւղի «Ափիղը» պարբերականի պատասխանատու տնօրէնն է 2002-ի երկրորդ կէսէն սկսեալ: Պատմական գիտութիւններու թեկնածու է: Կաշխատակցի հայրենական եւ սփիւռքահայ, մասնաւորաբար լիբանանահայ մամուլին եւ «Ազգ» օրաթերթին:

10. **Պէրճ Թոսպաբ.** Տիգրան Թոսպաբի որդին է: Արտագաղթած է Լիբանանէն:

11. **Տիգրան Թոսպաբ.** Լիբանանի խորհրդարանի երբեմնի անդամ: Պաղարծ «Այգ» օրաթերթի հիմնադիրն էր ու խմբագիրը: Թերթին արտօնագիրը արարներու վաճառելէ ետք արտագաղթած է Ա. Մ. Ն.:

12. **Ժիրայր Թօսունճեան.** Ծանօթ է ժիրայր Նայիրի գրչանունով: Երկար տարիներ խմբագրած է «Արարատ» օրաթերթը: 1990-ականներու կէսերէն կը շարունակէ հրատարակել Անդրանիկ Ծառուկեանի հիմնած ու խմբագրած «Նայիրի» շաբաթաթերթը՝ երկշաբաթեայ պարբերականութեամբ, հանդիսանալով, միաժամանակ, «Նայիրի»-ի խմբագիրը, պատասխանատու տնօրէնը եւ արտօնատէրը՝ թերթին արտօնագիրը գնած ըլլալով Ա. Ծառուկեանի ժառանգորդներէն:

13. **Սիւզան Խարտալեան.** Վաղուց Լիբանանէն արտագաղթած է Շուէտ, ուր Փետ Գոյմբվիսիի հետ կը գրադի հայոց առնչուած շարժապատկերներու պատրաստութեամբ:

14. **Սովետ Գեղեկեան.** «Արժիւ» ամսաթերթի պատասխանատու տնօրէնն է 2003-ի սկիզբէն եւ նոյնի խմբագրակազմի անդամ: Արուեստագիտութեան թեկնածու է, սեփականատէրը «Նոազ Արք» գեղանկարներու ցուցասրահին: Գիմնականին մէջ գեղարուեստին վերաբերող նիւթերով կ'աշխատակցի լիբանանահայ մամուլին, մասնաւորաբար «Ազգակ»-ին եւ «Արժիւ»-ին:

15. **Իվանա Մարաշեան**, Արաբերեն «*ալ-Ուսպուհ ալ-Արաբի*» շաբաթաթերթի պատասխանատու տնօրենն է: Ամբողջովին հեռու է հայկական կեանքեն:

16. **Մարցիս Լաճառեան**, Հայ Կաթողիկե Պատրիարքարանի ընդհատուած կամ դադարած «*Մասիս*» քաղաքական շաբաթաթերթի պատասխանատու տնօրենն էր:

17. **Զոհրո Շահինեան**, Ծանօթ գրականագետ եւ մանկավարժ: Եղած է երեք տասնամեակ առաջ դադարած «*Սիեկան*» գրական ամսաթերթին խմբագիրը:

18. **Սամուէլտ Պերթիզեան**, Ծանօթ է Շահանդուխտ գրական անունով: Մաս կը կազմէ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան «*Վզդակ*» օրաթերթի խմբագրութեան: Կ'աշխատակցի «*Վզդակ*»-ին ու «*Քազին*»-ին:

19. **Էա Տեռլիշեան**, Հ. Յ. Գ.-ի «*Վզդակ*» պաշտօնաթերթ-օրաթերթի պատասխանատու տնօրենն է: Հ. Յ. Գ.-ի կեդրոնական պաշտօնաթերթ «*Դրօշակ*»-ի գլխաւոր խմբագիր Լազարոս Պերպլերեանի տիկինն է:

## Բ. Գլուխ

### ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԱՐՏՕՆԱԳՐՈՒՄԸ ԼԻՔԱՆԱԻ ՄԵՋ ԵՒ «ԴԲՄՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ ՕՐԵՆԵ»-Ը

Լիբանանի մէջ, տպագիր լրատուամիջոցի հրատարակութեան բոլորութիւնը կու տայ տեղեկատուութեան նախարարը՝ յատուկ, իւրաքանչիւր պարբերականի համար անջատ որոշումով: Այդ որոշումը կը կոչուի «*արտօնագիր*», որու դիմաց պարբերականի հիմնադիր(ներ)ը համապատասխան տուրք կը վճարէ (վճարեն): Որոշումն անպայմանօրէն կը հրապարակուի «Պաշտօնական Թերթ»-ին («*Տերիտ Ռեմիյէ*») մէջ:

Նախարարի որոշումին սկիզբը կը նշուին այդ որոշման իրաւական հիմքերը՝ 26 Դոկտեմբեր 2000-ի թիւ 4336 նախագահական հրամանագիրն ու 14 Սեպտեմբեր 1962-ի «Հրատարակութեանց Օրենքը»:

Կը նշուին նաեւ բոլորութեան դիմում ներկայացնողին (ներկայացնողներուն) անուն(ներ)ը, դիմումի գրանցման թիւն ու թուականը: Նախարարը կը յայտնէ նաեւ, թէ բոլորութիւնը կը տրուի Տեղեկատուութեան Նախարարութեան ընդհանուր տնօրէնին առաջարկին վրայ եւ Լիբանանեան Մամուլ Արհեստակցական Միութեան («*Նիքրապար ալ-Մահաֆա ալ-Լուպնեհիյա*») հետ խորհրդակցելէ ետք: Այնուհետեւ, թուն որոշման դրոյթները կը տրուին առանձին յօդուածներով, որոնք ընդհանրապէս երկու հատ կ'ըլլան: Առաջին յօդուածին մէջ կը նշուին դիմորդին (դիմորդներուն) անունները, անոնց Լիբանանի քաղաքացի ըլլալը, հրատարակութեան պարբերականութիւնը, քնոյթը (քաղաքական կամ ոչ-քաղաքական ըլլալը), լեզուն (լեզուները), հրատարակութեան համար պատասխանատու անձին անունը եւ պարբերականին անունը: Վերջին յօդուածը միշտ ունի հետեւեալ ձեւակերպումը. «*Այս որոշումը կը հրապարակուի եւ կը տեղեկացուի առ որ անկ է*»: Որոշումը կրնայ պարունակել միջանկեալ յօդուած մը, ուր կրնայ նշուիլ,- բազմալեզու հրատարակութեանց պարագային,- միեւնոյն թիւին մէջ այդ լեզուներու

### قرار رقم ٢٠٠٢/٨١

الترخيص بإصدار مطبوعة شهرية، غير سياسية باللغتين العربية والإنكليزية، باسم، «الخطاب».

إن وزير الإعلام

يشاء، على الترخيص رقم ٤٣٣٦ تاريخ

٢٠٠٠/١٠/٢٦

بشأن، على قانون المطبوعات الصادر بتاريخ

١٩٦٢/٩/١٤

بناءً على الطلب المقدم من المدينين وتبد رؤوف

ضو وذلك رؤوف ضو والمسجل تحت رقم ١٠٧٤

تاريخ ٢٠٠٢/٤/١٥ (طلب الترخيص بإصدار

المطبوعة).

بناءً على اقتراح المدير العام لوزارة الإعلام

وبعد استشارة نقابة الصحافة اللبنانية.

يقدم ما يأتي.

القادة الأولي، يعالج المدينين واه رؤوف ضو

ووائل رؤوف ضو، اللجانها الرئيسية، ترخيصاً

وإصدار مطبوعة شهرية، غير سياسية، باللغتين

العربية والإنكليزية باسم «الخطاب» يحتفل

مسؤوليتها الصحفية اسماعيل حمير حيدر.

القادة الثانية، يكون صدور المطبوعة باللغتين

الذكورتين في اعادة الأولى. في أن ممًا ومن ضمن

العدد الواحد.

القادة الثالثة، ينشر هذا القرار ويبلغ حيث

شعبه المماثلة.

بيروت في ٩ أيار ٢٠٠٢

وزير الإعلام شاذي العريضي

### Արտօնագրի մոդը

«Այս որոշումը կը յօդուածը միշտ ունի հետեւեալ ձեւակերպումը. «Այս որոշումը կրնայ պարունակել միջանկեալ յօդուած մը, ուր կրնայ նշուիլ,- բազմալեզու հրատարակութեանց պարագային,- միեւնոյն թիւին մէջ այդ լեզուներու

առանձին կամ համատեղ գործածութեան թղլտուքիւնը: Որոշման ասարտին կը նշուին որոշման տրման վայրը՝ Պէյրուք, թուականը, նախարարին անունը, որու տակ կ'ըլլայ վերջինիս ստորագրութիւնը:

Լիբանանի մէջ տպագիր լրատուամիջոցներուն արտօնագրունը կը կատարուի ըստ անոնց բնոյթին քաղաքական նիւթեր հրատարակելու իրաւունքով կամ առանց այդ իրաւունքի: Այսպէս կոչուած «քաղաքական պարբերականներ»-ու արտօնագիր չի տրուիր աւելի քան երեք տասնամեակէ ի վեր: Լիբանանի պետութիւնը կը գտնէ, որ 10.5 քառակուսի քիլոմէթր տարածք եւ չորս միլիոն քաղաքացի ունեցող երկրի մը համար, «քաղաքական» 96 տպագիր լրատուամիջոցը արդէն շատ մեծ թիւ է: Սակայն, «քաղաքական» 51 օրաթերթերու աւելի քան երեք քառորդը եւ «քաղաքական» 45 շաբաթաթերթ-երկշաբաթաթերթ-ամսաթերթ եւն.-ի ծօտ կէտը լոյս չեն տեսներ վերջին տարիներուն (ոճանք նոյնիսկ տասնամեակներէ ի վեր): Ու թէն «Յրատարակութիւններու Օրէնք»-ը կը պարտաւորեցնէ տարեկան առնուազն մէկ թիւ լոյս ընծայել՝ արտօնագիրին իրաւագօրութիւնը պահպանելու համար, սակայն այս պայմանի ապահովման հսկող չկայ Լիբանանի մէջ եւ կարծեք բոլորն ալ հաշտուած են այս երեւոյթին հետ...

Լիբանանի «Յրատարակութիւններու Օրէնք»-ը կը տարբերակէ «արտօնատէր», «պատասխանատու տնօրէն» եւ «խմբագիր» հասկացութիւնները, թէն չարգիլեթ, որ միեւնոյն անձը ասոնցմէ երկուքը կամ նոյնիսկ երեքը միաւորէ իր անձին մէջ: Ըստ այդ օրէնքին՝

- ԱՐՏՕՆԱՏԷՐ-ը («սահէպ ալ-իմթիեազ») ֆիզիքական կամ իրաւաբանական այն անձը կամ անձերու խումբն է, որու անունով Լիբանանի Տեղեկատուութեան Նախարարութիւնը կ'արձանագրէ տուեալ անունով լրատուամիջոցը հրատարակելու արտօնագիր-նախարարական որոշումը: Պարտադիր պայման է, որ արտօնատէրը Լիբանանի քաղաքացի կամ լիբանանեան պաշտօնական գրանցում ունեցող առեւտրական ընկերութիւն, կուսակցութիւն կամ հասարակական կազմակերպութիւն (իրաւաբանական անձ) մը ըլլայ:

Արտօնագիրը առեւտրական սեփականութիւն կը նկատուի եւ, առ այդ, կ'ենթարկուի մասնաւոր սեփականութեան իրաւական յարաբերութիւններուն վաճառում, վարձակալում, ժառանգում, կտակում, եւ այլն:

- ՊՍՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԷՆ-ը («ալ-մուտիր ալ-մասու'ու») տուեալ լրատուամիջոցի բովանդակութեան համար պատասխանատու անձն է յաչս պետութեան: Միայն Լիբանանի խմբագիրներու Արհմիութեան անդամը (անդամութեան համար պարտադիր պայման է Լիբանանի քաղաքացի ըլլալը) իրաւունք ունի դառնալու պատասխանատու տնօրէն, ընդ որուն միայն մէկ լրատուամիջոցի համար: Լրատուամիջոցին կողմէ Լիբանանի օրէնսդրութեան որեւէ խախտման պարագային,<sup>4</sup> պատասխանատու տնօրէնն է, որ առաջին հերթին **անպայմանօրէն** կը կանչուի պատասխանատուութեան, ապա խնդրայարոյց հրապարակման հեղինակը, բայց երբեք խմբագիրը եւ արտօնատէրը, բացի այն պարագաներէն, երբ անոնցմէ մէկնումէլը նաեւ հրապարակման հեղինակն է եւ/կամ թերթին պատասխանատու տնօրէնը:

- ԽՄԲԱԳԻՐ-ը կամ ԽՄԲԱԳՐԱՊԵՏ-ը («ալ-մուտարրէր» կամ «րա'իս ալ-թահրիր») լրատուամիջոցի արտօնատիրոջ կամ անորմէ արտօնագիրը վարձակալած ֆիզիքական կամ իրաւաբանական

<sup>4</sup> Լիբանանի մէջ գոյութիւն ունի յետպագրական գրքեմուքիւն, գոր կը կատարէ Ընդհանուր Ապահովութեան Ապաստրկութիւնը: Պետութեան անվտանգութեանն սպառնացող կամ օրէնսդրութիւնը լքօրէն խախտած նիւթեր յայտնաբերելու պարագային, տուեալ համարը կը հաւաքուի լրագրավաճառներէն, վաճառքի կէտերէն ու տպարանէն, եւ դատական գործ կը յարուցուի լրատուամիջոցին դէմ երբեմն արգիլելով լրատուամիջոցին յետագայ հրատարակութիւնը մինչեւ դատավճիռին կայացումը: Պատժամիջոցները կ'ընդգրկեն դրամական տուգանքները, պարբերականի հրատարակութեան կասեցումը եւ նոյնիսկ խնդրայարոյց նիւթի հեղինակին (հեղինակներուն) եւ լրատուամիջոցի պատասխանատու տնօրէնին քանտարկութիւնը:

անծին (անծերուն) կողմէ, որոշ վարձավճարի դիմաց աշխատանքի կանչուած պաշտօնեայ մըն է պարզապէս: Պետութեան առջեւ խմբագիրը (խմբագրապետը) որեւէ պատասխանատուութիւն չի կրեր հրապարակումներու բովանդակութեան համար, բացի այն պարագաներէն, երբ խմբագիրն (խմբագրապետն) է խնդրայարոյց հրապարակման հեղինակը կամ բերթին պատասխանատու տնօրէնը:

Թեւ այս երեւոյթը օրէնքով կանոնակարգուած չէ, բայց Լիբանանի պետական մարմինները չեն արգիլեր չարտօնագրուած պարբերականներու հրատարակումը, սակայն, անոնք անպայմանօրէն պէտք է գործադրեն հետեւեալ երեք պայմանները.

1. Քաղաքական բնոյթի նիւթեր չհրապարակել:
2. Առեւտրական ծանուցումներ չհրատարակել:
3. Պարբերականը չվճառել:

Այսպիսի պարբերականները կը համարուին ներհաստատութեան կանոնակարգողներ (*«նաշրա»*) կամ *«մանշուրա»*, որոնցմէ օրինակներ, այսուհանդերձ, պարտադիր կարգով պէտք է ներկայացուին Տեղեկատուութեան Նախարարութեան, յար եւ նման արտօնագրուած պարբերականներուն, որպէսզի վերջինս ստուգէ առաջին երկու պայմաններուն կիրառուած ըլլալը: Այսպիսի ներհաստատութեան կանոնակարգողները կը համարուին դպրոցական պարբերականները, ներմիութեան կանոնակարգողները, հրատարակութիւնները, ինչպէս նաեւ վաճառող ու արտօնագրուած պարբերականներու՝ վերոնշեալ երեք պայմանները բաւարարող զանազան յաւելուածներն ու յատուկ թողարկումները:

## ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԿԱՎԱՆ ԿԱՍ ՀԱՅՈՏ ՊԱՅԿԱՆՈՂ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ 2002-Ի ՎԵՐՋԻ ԴՐՈՒԹԵՆԱՄԲ (ՀԱՅՐԵՆԻ ԱՅՐՈՒԲԵՆԱԿԱՆ ԸՆԴՐՈՎ)

Ստորեւ կը ներկայացնենք իրենց արտօնագրի իրաւական ոյժը 2002-ի վերջի դրութեամբ պահպանած հայերէն կամ հայոց պատկանող լիբանանեան պարբերականներուն ցուցակը: Այդ տուեալները վերցուած են Լիբանանեան Սամոյ Սիութենէն (*«Իբթիհատ ալ-Սահաֆա ալ-Լուպնանիյա»*), որը կը միաւորէ խմբագիրներու եւ Լրագրողներու Արհմիութիւնները) եւ ակնյայտօրէն բացթողումներ, սխալներ եւ ժամանակավրիպումներ կը պարունակեն: Օրինակ, անհնար է, որ լիբանանահայ երեսիլի մտաւորականներու անուններու առնչուած *«Քազին»*, *«Շիրակ»*, *«Մուսամող»*, *«Ձահերթ»* եւ *«Ձանասէր»* պարբերականներու թոյլատրելի լեզուներու շարքին հայերէնը չըլլայ: Ցուցակին մէջ իշխանապետներէն մահացած են Վարդգէս Տէր-Վարապետեանը, Բարունակ Թովմասեանը, Բենիամին ժամկոչեանը, Փիե Տիմիճեանը, հաւանաբար նաեւ՝ Վարուժան Սահակեանը, հայ կաթողիկէ վարդապետներ Հայր Գրիգոր Պաղեաղեանն ու Հայր Անտիս Գերբէքեանը: Լիբանանէն արտագաղթած են Վեր. Սամուկ Տորթրեանը (հաւանական է, որ ան մահացած ըլլայ), Արթին Գազանճեանը եւ Կարապետ Գազանճեանը: Թեւ Վարուժան Արք. Գերկեյեանը Կիպրոսի հայոց թեմի Կաթողիկոսական Փոխանորդն է (աթոսանիտը՝ Նիկոսիա), բայց ան հոնն է կը խմբագրէ *«Արծիւ»* թերթը (որու արտօնատէրն է) պէրոսթրանկ խմբագրական կազմի մը օժանդակութեամբ:

Ցանկին մէջ չենք ընդգրկած լիբանանահայ համայնավարներու *«Կանչ»* շաբաթաթերթը, որ լոյս կը տեսնէ լիբանանցի արաբ համայնավարներու *«այ-Նիտա'ա»* (արաբերէն՝ «Կանչ») քաղաքական օրաթերթի յաւելուածի կարգավիճակով:



**Ա. Քաղաքական Նիւթեր Դրատարակելու Թոյլտուութեամբ  
Արտօնագրուած Պարբերականներ.**

Պարբերականին անունը	արտօնատեղը	թոյլատրուած պարբերականութիւնը	թոյլատրուած լեզուները	ծանօթագրութիւններ
ԱԶՂԱԿ	Էւս Տերվիչեան	օրական	հայերէն	Գ. Յ. Դ.-ի պաշտօնաբերքն է: Լոյս կը տեսնուի շաբաթը վեց անգամ:
ԱՐԱՐԱՏ	«Սասիս» հրատարակչական ընկերութիւն	օրական	հայերէն	Ա. Դ. Գ. Կ.-ի պաշտօնաբերքն է: 8 Յունիս 2001-էն լոյս կը տեսնուի շաբաթը մէկ անգամ:
ԶԱՐԹՕՆՔ	«Զարթօնք» տպագրական եւ հրատարակչական ընկերութիւն	օրական	հայերէն	Ռ. Ա. Կ.-ի պաշտօնաբերքն է: Լոյս կը տեսնուի շաբաթը վեց անգամ:
ՍՍԱԻՍ	Գայ Կաթողիկէ Պատրիարքարան	շաբաթական	հայերէն	Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներուն լոյս տեսած է ամիսը մէկ անգամ: Ընդհատուած է կամ դադրած:

**Բ. Ոչ-Քաղաքական Նիւթերու Դրատարակութեան  
Արտօնագիրով Պարբերականներ.**

Պարբերականին անունը	արտօնատեղը	թոյլատրուած պարբերականութիւնը	թոյլատրուած լեզուները	ծանօթագրութիւններ
ԱԿՕՍ	«Չամազգայի-ն»-ի Եշան Փալանճեան Եննարանի Երջանաւարտից Սիւրբիւն	ամսական	հայերէն	Դադրած է վաղուց:
ԱՏՈՒՄՍ ԱԼ-ՔԱՍԵՐԱ	Վարուժան Պոյաճեան եւ Ապու-ուէ-Դամիտ Պէքրաշ	---	հայերէն, արաբերէն, ֆրանսերէն	Անունը արաբերէնէ թարգմանաբար կը նշանակէ «Քամերայի Լոյսեր»: Դադրած է վաղուց:
ԱՐԻՆ	Ժիրայր Գլըճեան	շաբաթական	հայերէն, արաբերէն	Ժ. Գլըճեանը նաեւ պատասխանատու տնօրէնն է: Աօտ երկու տարի հրատարակուելէ ետք վերջին տարիներուն ընդհատուած է կամ դադրած:
ԱՐԾԻԻ	Պօղոս Գերկելեան <sup>5</sup>	շաբաթական	հայերէն, արաբերէն, ֆրանսերէն	Կը շարունակուի:
ԱՐԵՏԱՐԱՄԻՉ	Վեր. Ասմուէլ Տոքթորեան	ամսական	հայերէն	Լոյս չի տեսներ:

<sup>5</sup> Պօղոս Գերկելեանը Վարուժան Արք. Գերկելեանի աշխարհական անունն է:

ՍԲԵՏԻՔ	Հ. Գրիգոր Վրդ. Պաղեսաղյեան	ամսական	հայերեն	Կը շարունակուի:
ԲԱԳԻՆ	Արթին Գազանճեան	-----	-----	Արթին Գազանճեանը նաև պատասխանատու տնօրէնն է: Կը շարունակուի եռամսեայ պարբերականութեամբ:
ԲԺԵԿ	Վարուժան Սահակեան	ամսական	հայերեն	Դադրած է վաղուց:
ԴԻՏԱԿ	Սամ Արրահամեան <sup>6</sup>	շաբաթական	հայերեն, արաբերեն	Կը շարունակուի:
ԴԱՅԿԱԶԵԱՆ ԴԵՐԵԼՏ	աւետարանական համայնք	շաբաթական	հայերեն	Անգլերէն լեզուով: Կը շարունակուի ամկանոն պարբերականութեամբ:
ՍԱՐԶԱԿԱՆ	Գրիգոր Քոչկերեան	շաբաթական	հայերեն	1990-ականներու սկիզբը կարճատև կեանք ետք դադրած է:
ՍԱՐԶԻԿ	Վարդգէ Տէր-Վարապետեան <sup>7</sup>	ամսական	հայերեն	Հ. Ս. Ը. Ս.-ի պաշտօնաթերթն է: Կը շարունակուի ամսական պարբերականութեամբ:
ՆԱՅԻՂԻ	Ժիրայր Թօսունեան (Ժիրայր Նախիբի)	շաբաթական	հայերեն	Կը շարունակուի:

<sup>6</sup> Սամ Արրահամեանը մականունը փոխած է Բագուպեանի:

<sup>7</sup> Վարդգէ Տէր-Վարապետեանը սպանուեցաւ 1985-ին:

3358

ՆՈՐ ԿԵԱՆՔ	Կարապետ եւ Սանուէ Գազանճեաններ	շաբաթական	հայերեն, արաբերեն	Ընդհատուած է կամ դադրած վերջին տարիներուն:
ՇԻՐԱԿ	Բարունակ Թովմասեան	շաբաթական	արաբերեն	Թ. Ս. Ս.-ի հրատարակութիւնն է: Վեցամսայ ընդհատուած ետք լոյս տեսաւ 2004-ի աշնան:
ՈՒՍԱՆՈՂ	Բենիամին Ժամկոչեան	շաբաթական	արաբերեն	Լոյս չի տեսներ:
ԶԱԴԵՐԹ	Գրիգոր Շահինեան	շաբաթական	արաբերեն	Լոյս չի տեսներ:
ԶԱՆԱՍԻՐ	Վեր. Ուֆֆի Ստրղեան	շաբաթական	արաբերեն	Կը շարունակուի:
ՍՓԵՔԹԱԲԸ	Փիեռ Տիմիճեան	հայերեն, արաբերեն, ֆրանսերեն	Լոյս տեսած է արաբերէնով եւ ֆրանսերէնով:	Դադրած է վաղուց:
ՍՓԻՒՐՔ	Դայկական Ժողովրդային Շարժում	շաբաթական	հայերեն	Տարեկան քանի մը միացեալ քիւեր լոյս կը տեսնեն վերջին տարիներուն:
ՎԵՐԵԼՔ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ	Հ. Աւետիս Վրդ. Դերբէքեան	ամսական	հայերեն	Լոյս չի տեսներ:

## Դ. Գլուխ

### ԼԻՐԱՆԱՆԱԿԱՑ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍԻՒԼԸ 2002-ԻՆ (ՄԱՑԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԸ ՑԱՆԿ ԵՒ ԿՎՊԻ ՏՈՒՑԱԼՆԵՐ)

Լիբանանահայ պարբերական մամուլի անունները, ըստ իրենց բնոյթի եւ բովանդակութեան, խայտաբղետ ծաղկեփունջ մը կը կազմեն: Հոս կը գտնենք հասարակական, բաղաբաղական, գրական, մշակութային, մարզական, երիտասարդական, ժամանցային, կրօնական, հայագիտական, դպրոցական եւ այլ բնոյթի պարբերականներ:

Այսօր 50-60 հազար հաշուող գաղութին մէջ, 2002 թուականին լոյս տեսած են մօտ 50 անուն պարբերականներ՝ ներառեալ **«Ազդակ»** օրաթերթի մշտական յաւելումները: Միեւնոյն հաստատութեան լոյս ընծայած անուններու քանակն առումով դափնեկիրը Հայ Աւետարանական Բոլէճն է՝ 6 անու: Անոր կը յաջորդեն **«Ազդակ»**-ը՝ 5 անուն, ապա՝ Հայկազեան Համալսարանը՝ 3 անուն: Առնուազն վեց նոր պարբերական ծնունդ առած է 2002-ին: Նոյն տարին որեւէ համար լոյս չեն ընծայած **«Արին»** եւ **«Նոր Կեանք»** (անհատական նախածնունդներ) երիտասարդական-ժամանցային հանդէսները, թէքեան Մշակութային Միութեան **«Շիրակ»** գրական ամսագիրն ու Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի **«Մասիս»** պաշտօնաթերթը, որոնք մինչեւ վերջին տարիները լոյս կը տեսնէին թէւ անկանոն պարբերականութեամբ: Անոնք կան ընդհատուած են, կամ արդէն դադրած: Յուսանք, որ անոնք շուտով կը վերայայտնուին:<sup>8</sup>

Բացի դպրոցական մամուլէն, 2002 թուականին լոյս տեսած լիբանանահայ պարբերականներուն մեծագոյն մասը պետական արտօնագիր ունի: Սակայն, անոնցմէ միայն չորսն ունին «բաղաբաղական» լրատուամիջոցի, այսինքն բաղաբաղական նիւթեր

<sup>8</sup> Ինչպէս նշած ենք վերը, «Շիրակ»-ը վերայայտնուեցաւ 2004-ի աշնանը:

հրապարակելու իրաւունքով լրատուամիջոցի արտօնագիր: Անոնք են, հայերէնի այբուբենական շարքով, Գ. Յ. Դ.-ի **«Ազդակ»**, Ս. Գ. Հ. Կ.-ի **«Արարատ»** եւ «Ռ. Ա. Կ.-ի **«Ջարթօն»** պաշտօնաթերթ-օրաթերթերը (**«Արարատ»**-ը 8 Յունիս 2001-էն «ժամանակաւորապէս» լոյս կը տեսնէ շաբաթը մէկ անգամ) եւ Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի «Մասիս» պաշտօնաթերթ-շաբաթաթերթը (ընդհատուած կամ դադրած է վերջին տարիներուն): Լիբանանահայ համայնավարներու **«Կամէջ»** շաբաթաթերթը, որ բաղաբաղական հրապարակումներ կ'ընէ, լոյս կը տեսնէ Լիբանանի Համայնավար Կուսակցութեան **«այ-Նիտա'ն»** «բաղաբաղական» արտօնագիրով, ընդհատուած կամ դադրած օրաթերթի յաւելումի կարգավիճակով:

Նկատել տանք, որ աւանդոյթի կարգ անցած է այն փաստը, որ լիբանանահայ պարբերականները, հազուադէպ բացառութեամբ, իրենց տպագրանակը չեն հրապարակեր, այդպիսով թարգմանելով իրենց իսկական տպագրանակները, որոնք «բաղաբաղական» օրաթերթերու պարագային իսկ, 2500 օրինակը չեն գերազանցեր: Միակ բացառութիւնը **«Հայկազեան Հայագիտական Հանդէս»**-ն է՝ 400 օրինակ: Սեր հետախուզութեան արդիւնքներով լիբանանահայ ոչ-դպրոցական պարբերականներու մեծագոյն մասին տպագրանակ կը տարուերի 500-1000 օրինակի միջեւ:

Ստորեւ կը ներկայացնենք հակիրճ տեղեկութիւններ 2002 թուականին թէկուզ մէկ թիւ լոյս ընծայած լիբանանահայ պարբերականներուն մասին: Չափոնք դասակարգած ենք երեք խումբերու մէջ՝ «բաղաբաղական», «ոչ-բաղաբաղական» եւ «ուսանողական-դպրոցական»: Իւրաքանչիւր խումբի պարբերականները ներկայացուցած ենք ըստ հայոց այբուբենի յաջորդականութեան:

Տեղեկութիւնները շարադրուած են հետեւեալ յաջորդականութեամբ.

- պարբերականին անունը,
- ենթավերնագիրը կամ բնոյթը.

- հիմնադրութեան թուականը,
- պատկանելիութիւնը կամ հրատարակող մարմինը,
- պարբերականութիւնը,
- արտօնատեղը,
- պատասխանատու տնօրէնը,
- խմբագիրը,
- չափը,
- ծաւալը,
- կապի տուեալները (հեռաձայն, հեռապատճէն, փոստարկղ, էլեկտրոնային նամակային հասցէ, կայքէջ),
- րովանդակութիւնը,
- այլ տեղեկութիւններ (տպարան, տպագրական առանձնայատկութիւններ եւ այլն):

**Ա. «ՔԱՂԱՔԱԿԱՆ» ՊԱՐԹԵՐԱԿԱՆՆԵՐ**




- «ԱՔՂԱԿ». «Քաղաքական եւ գրական օրաթերթ»: Առաջին քիւր լոյս տեսած է 5 Մարտ 1927-ին: Գ. Յ. Գ. -ի պաշտօնաթերթն է: Լոյս կը տեսնէ շաբաթը վեց անգամ (բացի Կիրակի օրերէն): Արտօնատեղը եւ պատասխանատու տնօրէնն է Էա Տերվիշեանը: Խմբագիրին անունը չի նշուիր. փաստական խմբագրապետն է Շահան Չանտահարեանը՝ աջակից ունենալով Գրաչ Վարժապետեանը եւ Ժագ Յակոբեանը: Զափը՝ A-2 (42 x 59.4 սմ.), ծաւալը՝ 5 տպագրական մամուլ: 10 էջ: Հեռաձայն՝ 258526, 260115, 241274, հեռապատճէն՝ 258529, հասցէ՝ փոստարկղ 80860, Պուրճ Համմուտ, էլեկտրոնային

նամակային հասցէ (այսուհետ է. ն. հ.) aztag@inco.com.lb, կայքէջ www.aztagdaily.com:

«Ազգակ»-ը որակական հսկայական յառաջընթաց արձանագրեց 2002 թուականին: Ամսական, անվճար, մայր քերթին հետ տարածուող յաւելուածներու կարգավիճակով, A-3 (29.7 x 42 սմ.) չափի 8 էջ (2 տպ. մամուլ) ծաւալով, արտաքին էջերու զուեւոր տպագրութեամբ յաջորդաբար լոյս տեսան մանկա-պատանեկան «ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ»-ը (19 Ապրիլէն), մարզական «ՆԱԿԱՍՍՐԴ»-ը (7 Օգոստոսէն) եւ կնոջական «ԱՆԱԴԻՏ»-ը (24 Դեկտեմբերէն): Երեք անգամ, A-4 չափի (21 x 29.7 սմ.) 24 էջ (3 տպ. մամուլ) հանդէսի տեսքով, ամբողջովին զուեւոր տպագրութեամբ լոյս տեսաւ «PROMOTION» ծանուցումներու յաւելուածը՝ մեծ մասամբ անգլերէն ծանուցումներով: «Ազգակ»-ի 28 Մայիս 2002-ի քիւր հրատարակուեցաւ արտաքին 4 էջերու զուեւոր տպագրութեամբ:



Շահան Չանտահարեան



Տարուան ընթացքին թերթը լոյս ընծայեց A-3 չափի 8 էջ ծաւալով հինգ յատուկ թողարկումներ, որոնք մայր քերթին հետ բաժնուեցան ծրիօրէն. անոնք նուիրուած էին, համապատասխանաբար, Մեթնի ընտրաշրջանի երեսփոխանական մասնակի ընտրութիւններուն, աւելի ճիշդ՝ քեկնածու Միրնա Մըրի ընտրական քարոզչութեան (1 Յունիս), «Համագային»-ի Սըզհերի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկին (17 Յունիս), Հայաստանի եւ Լիբանանի հանրապետութեանց միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման

տասնամեակին (21 Սեպտեմբեր), Մրզեհի մէջ «Աղբալեան - Գ. Մ. Ը. Մ.» մարզա-մշակութային համալիրի բացումին (26 Սեպտեմբեր) եւ Գ. Յ. Գ.-ի 112-ամեակին (13 Պեկտեմբեր): «Ազգակ»-ի, աւելի ճիշդ՝ Գ. Յ. Գ.-ի նախածնունդեանը եւ տպագրութեանը, լիբանանեան ամենատարածուն օրաթերթերէն «այ-Լահար»-ի «յատուկ յաւելուած»-ի կարգավիճակով, 45 հազար տպաքանակով լոյս տեսաւ եւ «այ-Լահար»-ի 24 Ապրիլ 2002-ի թիւին հետ ձրիօրէն բաժնուեցաւ «ԱԼ-ԻՊՏԱՍ ԱԼ-ԱՐԱՄԻՅԱ» (արաբերէն «Հայկական Յեղաապանութիւն») թողարկումը:



30 Մարտ 2002-էն սկսեալ, իւրաքանչիւր Շաբաթ օր, «Ազգակ»-ի թիւին հետ ձրիօրէն կը բաժնուի Գ. Յ. Գ.-ի Հայաստանի Գերագոյն Մարմինի պաշտօնաթերթ «ԵՐԿԻՐ» շաբաթաթերթի (Երեսնի մէջ լոյս կը տեսնէ ամէն Ուրբաթ) պէյրութեան կրկնօրինակը՝ «Ազգակ»-ի յաւելուած»-ի կարգավիճակով: Պէյրութեան «Երկիր»-ը կը կրկնահրատարակուի արեւելահայերէնով, մինչեւ 10-րդ թիւը՝ արեղեանական, այնուհետեւ՝ դասական ուղղագրութեամբ: Ձանազան պատճառներով, որոնց շարքին՝ լեզուական տարբերութիւնները, լրագրողական մակարդակը, չափէն աւելի քաղաքականացուած ու միակողմանի ըլլալը, եւն., «Երկիր»-ը չի հետաքրքրեր «Ազգակ»-ի ընթերցողներու մեծագոյն մասին, եւ, մեր կարծիքով, այս կրկնահրատարակութիւնը, իր ներկայ տեսքով եւ բովանդակութեամբ, անիմաստ է եւ շարունակութեան հեռանկար չունի:

Այս առթիւ յայտնենք, որ Լիբանանի՝ աւելի քան 40 տարուան կեանք ունեցող եւ շատ հինգած «Հրատարակութեանց Օրէնք»-ը չէ նախատեսած յաւելուածներու եւ յատուկ թողարկումներու հաւանականութիւնը: Հետեւաբար, նման հրատարակութեանց օրինակներու յատակ չէ:

18 Նոյեմբեր 2002-ին, «Ազգակ» ունեցաւ իր էլեկտրոնային տարբերակը Համացանցին մէջ. կայքէջը՝ [www.aztagdaily.com](http://www.aztagdaily.com):

«Ազգակ»-ը 2002-ին հրատարակեց երկու բացառիկ համարներ, առաջինը՝ 24 Ապրիլին նուիրուած Մեծ Եղեռնի 87-ամեակին, A-4 չափի 144 էջ ծաւալով: Տարուան վերջին օրերուն լոյս տեսաւ 1 Յունուար 2003 թուականը կրող բացառիկ համարը՝ A-4 չափի 216 էջ ծաւալով:

2002-ի Յունուարին, «Ազգակ» հրատարակեց «Հայրենի Ջաւախք» յօդուածներու եւ ուղեգրութիւններու ժողովածուն՝ A-4 չափի 480 էջ ծաւալով, Վիզէն Աւագեանի եւ Շողիկ Ալըզեանի խմբագրութեամբ:

«Ազգակ»-ը, պէյրութեան «Երկիր»-ը եւ «Ազգակ»-ի ընտանիքի միւս անդամները կը տպագրուին «Ազգակ»-ի սեփական տպարանին մէջ:<sup>9</sup>

«Պոստիկ-Ազտիկ»-ը ունի առանձին է. ն. հ.՝ bezdig-mezdig@hotmail.com:



- «ԱՐԱՄԻՅԱ». «Քաղաքական օրաթերթ»: Կը հրատարակուի 7 Նոյեմբեր 1937-էն: Ս. Գ. Գ. Կ.-ի պաշտօնաթերթն է: 1990-ականներու վերջին եւ 2000 թուականին տարբեր ժամանակներով ընդհատումներ ունենալէ ետք, 8 Յունիս 2001-էն ի վեր լոյս կը տեսնէ շաբաթական կանոնաւոր պարբերականութեամբ, թեւ ճակատին կը պահպանէ «օրաթերթ» ենթավերնագիրը: Լոյս կը տեսնէ Ուրբաթ օրերը: Արտօճատէրն է «Մասիս» հրատարակչական ընկերութիւնը,

<sup>9</sup> Աւելցնենք, որ 2003-ի սկիզբին «Ազգակ»-ի ընտանիքը նոր ծնունդ մըն ակ ունեցաւ. իւրաքանչիւր ամսուան վերջին օրերը լոյս կը տեսնէ թերթին նոյնանուն անսական յաւելուածը՝ «ամսաթերթ» ենթախորագիրով:

պատասխանատու տնօրենը Աբխաղոմ Գրըշքեանը (Գրանդ Գանգրունի): 2002-ի առաջին ամիսներուն թերթը խմբագրած է թերթի անձնակազմի 35-ամեայ անդամ Սարգիս Նաճարեանը, որուն յաջորդեց Երեանի Փոլիթեքնիկ Դիմնարկէն շրջանաւարտ Ահարոն Շխրտըմեանը: A-2: 12 էջ: Դեռածայն-հեռապատճէն 565599, հասցէ փոստարկով 17-5275, Սար Սիայէլ, Պէյրուս, է. ց. հ. ararad@terra.net.lb, կայքէջը www.araraddaily.com: Թերթին արտաքին էջերը լոյս կը տեսնեն գունաւոր տպագրութեամբ:



Ահարոն Շխրտըմեան

2002-ի Դեկտեմբերի վերջին օրերուն լոյս տեսաւ «Արարատ»-ի նոր տարուան բացառիկ թիւը 1 Յունուար 2003 նշումով, 23 x 30 սմ. չափի 128 էջ ծաւալով:



ZARTONK QUOTIDIEN POLITIQUE ARMÉNIEN Զարթոնէկ Գրեմաճիան Գրեմաճիան Գրեմաճիան Գրեմաճիան

- «**ԶԱՐԹՈՆԷ**», Գրատարակութեան արաբերէն տուեալներու ցուցակին մէջ կը կոչուի «հայկական քաղաքական օրաթերթ»: Լոյս կը տեսնէ 26 Սեպտեմբեր 1937-էն: Ռ. Ա. Կ.-ի պաշտօնաթերթն է: Կը հրատարակուի շաբաթը վեց անգամ (բացի Երկուշաբթի օրերէն): Արտոնատերն ու հրատարակիչն է «Զարթօնք» հրատարակչական ընկերութիւնը, պատասխանատու տնօրէնն ու խմբագիրը՝ Երեանի Պետական Դամալսարանի Բանասիրական Բաժանմունքի

շրջանաւարտ, բանասիրական գիտութիւններու մագիստրոս Պարոյր Աղպաշեանը:<sup>10</sup> A-2: 4 էջ. 2002-ին, Շաբաթ օրուան թիւերուն ծաւալը կրկնակի էր 8 էջ (2 տպ. մամուլ):<sup>11</sup> Դեռածայն-հեռապատճէն 566709, փոստարկով 17-5348 եւ 1104 2030, 11-617 եւ 1107 2150 Ռիատ Սուի, Պէյրուս, է. ց. հ. zartonk@dm.net.lb:

2003-ի նոր տարուան ամանդուբային բացառիկ, հանդէսատիպ համարին փոխարէն, թերթը նախընտրեց տարուան վերջին թիւը լոյս ընծայել A-2 չափի 16 էջ ծաւալով:

«**Զարթօնք**» կը տպագրուի «**ալ-Նահար**»-ի տպարանին մէջ:



- «**ԿԱՆԵՂ**», «Քաղաքական շաբաթօրեակ»: Կը հրատարակուի 1971-էն:<sup>12</sup> Լիբանանահայ համայնավարներու յայտարարուած պաշտօնաթերթն է: Արտոնատերն է «Սապահ» լրագրական ընկերութիւնը, պատասխանատու տնօրենը՝ Սըլեհն Ապու Ռոզզը: «Խմբագրութեան պատասխանատու»ն է լիբանանահայ այսօրուան մամուլի խմբագիրներու նահապետը 1914թ.-ին ծնած Պարոյր

<sup>10</sup> Պ. Աղպաշեանը 2003-ին արժանացաւ Երեանի «Դրաշէյա Աճառեան» համալսարանի պատուոյ դոկտորի գիտական աստիճանին, իսկ 2004-ին Ամենայն Դայոց Կաթողիկոս Գարեգին Բ.-ի շնորհած «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանին:

<sup>11</sup> Ներկայիս, «Զարթօնք»-ի շաբաթօրեայ համարները լոյս կը տեսնեն սովորական ծաւալով 4 էջ (2 տպ. մամուլ):

<sup>12</sup> Թերթը նախորդ տասնամեակներուն որոշ ժամանակ լոյս տեսած է «Ազգային Մշակոյթ» անունով կապուած արաբերէն մալթ թերթի արտոնագիրի խնդիրներուն հետ:

Երեցեանը: A-3, 8 էջ: Գեոստայն՝ 823457, 834045, փոստարկը 11-6035, Պէյլուք, է. Ը. Կ.՝ ganchnews@hotmail.com:

**«Կանչ»**-ը լոյս կը տեսնէ արարերէն **«այ-Նիտա՛ր»** (արարերէնով՝ «Կանչ») քաղաքական թերթի յաւելուածի կարգավիճակով:

**«Կանչ»** կը տպագրուի «Թեքնոփրես» տպարանին մէջ, որը, փաստօրէն, Լիբանանի համայնակարներու սեփականութիւնն է:

#### **Բ. «ՌԶ-ՔԱՂԱՔԱԿԱՆ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ.**

- **«ԱՆԻ»**. «Պարբերագիրք»: Գրատարակութիւն Անի Օթեակ Թիւ 11: Առաջին անգամ լոյս տեսած է 1967-ին: Շատ հաւանաբար՝ արտօնագիր չունի եւ լոյս կը տեսնէ որպէս ներկազմակերպական հրատարակութիւն, հետեւաբար՝ պատասխանատու տնօրէնի անուն ալ չի նշուիր: Խմբագրական մարմինը բաղկացած է 8 հոգիէ՝ Միշտիք, Յար Թագ, Գլխարկ Սաղրեան, Վիտիս Զլաքմաքեան (շատ հաւանաբար՝ անգլերէն նիւթերու խմբագիրը), Կ. Աղդարեան, Յակոբ Փանոսեան: Չափը՝ 16 x 24 սմ.: 71 էջ + 4 կողքեր: Կապի տուեալներ չեն նշուիր: Կը բովանդակէ հրատարակումներ ազատ որոնարութեան (ներառեալ՝ հայկականը) պատմութեան, գաղափարախօսութեան, Անի Օթեակ Թիւ 11-ի մասին եւ այլն: Նիւթերուն զրեթ մէկ երրորդը անգլերէն է: Ա. կողքին վրայ տպուած է Անի Օթեակ Թիւ 11-ի պաշտօնական նշանը:

**«ԱՍՔ»** պարբերագիրքը կը տպագրուի «Տուփրինք»-ի (Duoprint) կողմէ:

2002-ին լոյս տեսած է, շատ հաւանաբար, միայն մէկ համար, բազմաթիւ տարիներու ընդհատումէ ետք:

- **«ԱՐԾԻԻ»**. «Գրական, մշակութային, կրօնական եւ ընկերային շարաքաթերք»: Կը հրատարակուի 1994-էն: Փաստական պարբերակականութիւնը՝ ամիսը մէկ անգամ: Արտօնատէր եւ խմբագիր՝

Վարուժան Արք. Գերկելեան (Կիպրոսի թեմի Կաթողիկոսական Փոխտնօրդ, Լիբանանի քաղաքացի):<sup>13</sup> Գրատարակութեան արաբերէն տուեալներուն մէջ, փոխան «պատասխանատու տնօրէն»-ի, սխալմամբ «գլխարկ խմբագիր» կը նշուի Ապտ-էլ-Քերիմ ալ-Նաթուրի անունը: A-3: 16 էջ: Գեոստայն՝ 268086, (03) 326951, է. Ը. Կ.՝ ardziv@cyberia.net.lb:<sup>14</sup> 2002-ին, յաճախ, թերթի դարձեռնեսի ճակատն ու 15-րդ եւ 16-րդ էջերը արաբերէն են, որոնց մշտական հեղինակն է Փառէն Վրդ. Վարդանեանը՝ կրօնական թեմաներով գրութիւններով: Գրեթէ բոլոր թիւերը լոյս կը տեսնեն զանազան ազգայիններու ֆինանսական օժանդակութեամբ:

- **«ԱԻԵՏԱՐԵՐ»**. Անունը լրացումը՝ «Յայ Կաթողիկէ ժողովրդապետութիւններու»: Մեր տեսած միակ թիւը կը կրէր «Նոր Շրջան, թիւ 6, Փետրուար 2002» նշումները: Ըստ երեսոյթին՝ ունի շարաքական պարբերակականութիւն, քանի որ ունի միասնական համարակալում (թիւ 6-ը՝ էջ 21-24, նաեւ՝ չհամարակալուած 2 էջ ներդիւր): A-5 (10.5 x 15 սմ.): 4 էջ: Կապի տուեալներ չկան: Կը բովանդակէ կրօնական նիւթեր, ծիսական արարողութեանց ժամանակացոյցեր: Ակնյայտօրէն՝ նախատեսուած է հայ կաթողիկէ եկեղեցիներ յաճախողներուն ձրիօրէն բաժնուելու համար:

- **«ԱԻԵՏԻՔ»**. «Պաշտօնաթերք Գայ Կաթողիկէ Պատրիարքութեան»: Կը հրատարակուի 1932 թուականէն: «Սեփականութիւն եւ հրատարակութիւն Գայ Կաթողիկէ Պատրիարքարանի»: Պարբերակականութիւնը թէւ ամսական է, սակայն լոյս կը տեսնէ միացեալ չորսական թիւերով՝ տարին երեք անգամ: Արտօնատիրոջ եւ պատասխանատու տնօրէնի անուններ չեն նշուիր (արտօնագիրը տրուած է Գ. Գրիգոր Վրդ. Պաղեղալեանի անունով):

<sup>13</sup> 2003-ի սկիզբէն թերթի գլխարկ խմբագիր եւ պատասխանատու տնօրէն դարձաւ արուեստագիտութեան թեմանօտ Սովսե Գերկելեանը:

<sup>14</sup> 2004-ին թերթն ունեցաւ իր կայքէջը՝ www.ardziv.com:

հմբագրապետ Յ. Մերոպ Վրդ. նուրբան: Չափը 17 x 24 սմ.: էջաքանակը փոփոխական է՝ 160 էջի սահմաններում մեջ. ունի տարեկան միասնական էջահամարակալում (2002-ին՝ 482 էջ): Հեռաձայն՝ 585670/1, 585690, 583520, հեռապատճեն՝ 567756, հասցե՝ Հայ Կաթոլիկ Պատրիարքարան, ժեթաուի հիւանդանոցի փողոց, էշրէֆիտ, Պէյրուք, է. ն. հ. batraren@magnarama.com: Բովանդակութիւնը՝ կրօնական, աստուածաբանական եւ պատմաբանասիրական հրապարակումներ: Կան օտարալեզու ֆրանսերէն եւ իտալերէն նիւթեր:

- «**ՔԱԳԻՆ**». «Ամսագիր գրականութեան եւ արուեստի»: Լոյս կը տեսնէ 1962-էն: «Հրատարակութիւն «Համազգային»-ի Կեդրոնական Վարչութեան»: Կերջին տարիներուն պարբերականութիւնը



Պօղոս Սնապեան

տարին չորս անգամի: Արտօնատրք ու պատասխանատու տնօրէնն է բժիշկ Արթին Գազանճեանը (Յարութիւն Գեղարդ): Խմբագիրն է արձակագիր Պօղոս Սնապեանը,<sup>15</sup> որ առաջին օրէն կը խմբագրէ

<sup>15</sup> Պ. Սնապեանին 2004 թուականի կէսին փոխարինեց Յակոբ Պալեանը: Սինչ այդ, 2003-ի Մարտին հանդիսակորապէս նշուեցան «Քազին»-ի ու ամրո մէջ Սնապեանի խմբագրական կեանքի բառասանակները:



ամսականէն վերածուած է

պարբերականը, սկիզբը որպէս վարիչ-խմբագիր Կարո Սասունիի օգնական, ապա՝ խմբագիր: A-4: Ծաւալը փոփոխական է՝ ընդհանրապէս 150 էջի սահմաններուն մէջ: Հեռաձայն՝ 258526, հասցե՝ «Շաղղոյեան» Կեդրոն, Պուրճ Համմուտ: Բովանդակութիւնը հիմնականին մէջ հայկական գրականութիւնն է. կան նաեւ օտար հեղինակներու գործերի բարգմանութիւններ:

«Քազին» կը տպագրուի «Համազգային»-ի «Վահէ Սեթեան» տպարանին մէջ:

Սինչեւ 1996-ը «**Քազին**»-ը եղած է Հ. Յ. Գ.-ի հրատարակութիւնը, ապա փոխանցուած է «Համազգային Կրթական եւ Մշակութային Միութեան»:

2003-ի Յունուարի սկիզբը լոյս տեսաւ ամսագիրին 2002-ի 3-րդ թիւը՝ «ամառ, 3 2002» նշումներով:

- «**ԴԻՏԱԿ**». «Մշակութային-ընկերային-տնտեսական-կրթական հայկական միջազգային ամսական հանդէս»: Լոյս կը տեսնէ 1996 թուականէն: Պարբերականութիւնը՝ անկանոն ամսական: Արտօնատրք եւ գլխավոր խմբագիր՝ Սամ Բագուպեան, պատասխանատու տնօրէն՝ Նաուն Լապաքի, գործադիր տնօրէն՝ Աւետիս Չափարեան: A-4: Ծաւալը փոփոխական է՝ 64-80 էջերու սահմաններուն մէջ: Հեռաձայն՝ (04) 405170/1, (04) 566631, (03) 238887, (03) 368478, հեռապատճեն՝ (01) 563418, փոստարկը՝ 17-5094, Պէյրուք, է. ն. հ. scopeint@inco.com.lb:

Հանդէսին տպագրութիւնը գունաւոր է: Միակ պարբերականն է, որ կը վաճառուի Երեւանի լրագրական կրպակներու մէկ մասին մէջ: Առաջին տարիներու խանդավառ ընդունելութենէն ետք, «**Դիտակ**»-ի նկատմամբ հետաքրքրութիւնը հետզհետէ կը խամրի վերջին տարիներուն:

- «**ԼՈՏՍ**». Ենթավերնագիր չունի: Կը հրատարակուի 1937-էն: «Հրատարակութիւն Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետ. Եկեղեցիներու Միութեան Հրատարակչական Մարմինի»: Պարբերականութիւնը՝



եռամսեայ: Ներմիութենական հրատարակութիւն մը ըլլալուն համար արտօնագիր-արտօնատր եւ պատասխանատու տնօրէն չունի: Խմբագիրն է պատմագիտութեան թեկնածու Երուանդ Քասունին, որ կը խմբագրէ նաեւ նոյն միութեան «Ձանասեր» եւ «Պատմական Արծազանգ» պարբերականները: Չափը 10.5 x 16.5 սմ.: 60 էջ: Հեռածայն 565719, հեռապատճեն 565629, փոստարկղ 11-0377 Ռիատ Սոլի, 1107 2040 Պէյրութ, է. ց. հ.՝ uaecne@cyberia.net.lb: Այս կրօնական եռամսեայ պարբերականին իւրաքանչիւր էջը կը բովանդակէ օրացուցային օրուան մը սուրբ գրային համար մը ու անոր առնչուող մանրապատում մը:

«Լոյս» կը տպագրուի «Եունայթըտ Փրինթըրզ»-ի (United Printers) կողմէ:



Երուանդ Քասունի

- «ԼՐԱՏՈՒ». Կը հրատարակէ Հայ Աւետարանական Ա. Եկեղեցին (Պէյրութ, Սեբսիք փողոց): Լոյս կը տեսնէ քանի մը տասնամեակէ ի վեր: Պարբերականութիւնը շաբաթը մէկ անգամ: Շատ հաւանաբար խմբագիրը եկեղեցւոյ հովիւն է՝ Վեր. Յովհաննէս Կ. Ավագեանը: 16.5 x 21.1 սմ.: 4 էջ: Հեռածայն 343182, 349817, 349815, փոստարկղ 11-2508 Ռիատ Սոլի, 1107-2110 Պէյրութ, է. ց. հ.՝ faec@terra.net.lb, hovvens@terra.net.lb: Բովանդակութիւնը հովիւի հոգեւոր խօսքը (էջ 1-2), եկեղեցւոյ գործունէութենէն լուրեր եւ ծանուցումներ:

- «ԽՕՍՆԱԿ». «Պաշտօնաբերք Հ. Բ. Ը. Միութեան եւ Հ. Ե. Ընկերակցութեան Լիբանանի Շրջանակի»: Լոյս կը տեսնէ 1957-էն: «Հրատարակութիւն Հ. Բ. Ը. Միութեան Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովի»: Պարբերականութիւնը թեւ ամսական է, սակայն

յաճախ լոյս կը տեսնէ միացեալ թիւերով: Ներմիութենական հրատարակութիւն մը ըլլալով արտօնատր եւ պատասխանատու տնօրէն չունի: Պատասխանատու խմբագիրն է արծակագիր Արամ Սեփեթեանը՝ ժիրալոյ Դանիէլեանէ, Պայծիկ Գալայճեանէ, Համբիկ Մարտիրոսեանէ եւ Գէորգ Սանթրութեանէ բաղկացած խմբագրակազմի մը օժանդակութեամբ: A-4: Ծաւալը փոփոխական է 64 էջի սահմաններուն մէջ: Հեռածայն (04) 522842/3, հեռապատճեն (01) 875269, փոստարկղ 402, Անթիլիաս, է. ց. հ.՝ sipan-p@bigfoot.com: Պարբերականը հիմնականին մէջ կ'արտացոլէ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան տեղական (ներառեալ՝ Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան), նուազ չափով՝ աշխարհասփիւռ կառոյցներուն եւ մարմիններուն գործունէութիւնը:

«ԽՕՍՆԱԿ»-ը կը շարուի եւ լոյս կ'ընծայուի «Սիփան» հրատարակչութեան կողմէ, որու սեփականատէրն է Արամ Սեփեթեանը:

- «ՀԱՍԿ». «Պաշտօնական ամսագիր Կաթողիկոսութեան Հայոց Սեփի Տանն Կիլիկիոյ»: Առաջին անգամ լոյս տեսած է 1932 թուականին Երջանկայիշատակ Բաբլոն Ա. Աթոռակից Կաթողիկոսին նախաձեռնութեամբ: Պարբերականութիւնը ամիսը մէկ անգամ, թեւ երբեմն լոյս կը տեսնէ միացեալ թիւերով: Հրատարակութեան ֆրանսերէն տունեալներուն մէջ պատասխանատու տնօրէն կը նշուի Վահան Վրդ. Պերպերեանին անունը: Սինչեւ 2002-ի աշունը հանդէսը կը խմբագրէր Գրիգոր Վրդ. Չիֆթեանը,<sup>16</sup> որուն յաջորդեց ղարեվանքի տեսուչ Պարթեւ Վրդ. Կիլիսեանը: A-4: Ծաւալը փոփոխական է 80 էջի սահմաններուն մէջ. ունի տարեկան միասնական էջահամարակալում (2002-ին 998 էջ): Հանդէսին մէջ կապի տունեալներ չեն նշուիր. Կիլիկիոյ Կաթողիկոսարանի կապի տունեալներն են հեռածայն (04) 410001/2/3, հասցէ՝ Հայոց Կաթողիկոսարան, Անթիլիաս, է. ց. հ.՝ catholic@inco.com.lb, կայքէջ

<sup>16</sup> Ներկայիս՝ ծայրագոյն վարդապետ:

www.cathcil.org: Բացի Կիլիկիոյ Աթոռի ներքին կեանքի լուրերէն, կը բովանդակէ կրօնական-աստուածաբանական, պատմա-բանասիրական եւ նման բնոյթի յօդուածներ:

**«Դասկ»** կը տպագրուի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տպարանին մէջ, Անթիլիաս:

- **«ԴԱՍԿ ԴԱՅԱԳԻՑԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔ»**. Հրատարակութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան: Առաջին անգամ լոյս տեսած է 1948 թուականին՝ Երջանկայիշատակ Գարեգին Ա. Յովսէփեանց Կաթողիկոսին նախածեռնութեամբ: Եւր Շրջանի 9-րդ համարը՝ 1997-2001 ճշումով, լոյս տեսաւ 2002-ի գարնան, շնորհանդէսը կայացաւ Երեւանի Պետական Համալսարանին մէջ եւ ծրիօրէն բաժնուեցաւ ներկաներուն: Խմբագիրներ՝ Նարեկ Ծ. Վրդ. Ալեքեմզեան<sup>17</sup> եւ Շահան Ծ. Վրդ. Սարգիսեան:<sup>18</sup> Վերջինիս Թեհրանի թեմ տեղափոխուելէն ետք, Արամ Ա. Կաթողիկոսին կարգադրութեամբ, միանձնեայ խմբագիր նշանակուեցաւ դպրեւանքի տեսուչ Պարթեւ Վրդ. Կիլիմեանը: A-4: 536 էջ: Կապի տուեալները՝ տեսն **«Դասկ»**: Կը բովանդակէ պատմա-բանասիրական յօդուածներ եւ այլ հրատարակումներ:

Տպարանը՝ տեսն **«Դասկ»**:

- **«ԴԵԴՈՍ ՏԵՂԵԿԱՏՈՒ»**. Ենթակերնագիր չունի: «Նոր Շրջան, Ա. տարի» ճշումով առաջին թիւը լոյս տեսաւ 2002-ի Յունուարին: «Հրատարակիչ՝ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութիւն»: Մինչեւ թիւ 5, Սայիս 2002-ը ներառեալ, լոյս տեսած է ամիսը մէկ անգամ, ապա միացեալ համարներով: Ներմիութեան կան հրատարակութիւն մը ըլլալով՝ արտօնագիր եւ պատասխանատու տնօրէն չունի: Ունի 10 հոգիէ բաղկացած խմբագրակազմ մը, «հոգեւոր խորհրդատու» Վրոյր Վրդ. Տեմիրճեան»: 17.5 x 24.5 սմ.: 20 էջ + 4 կողքեր (թիւ 1-5), 16 էջ + 4

<sup>17</sup> Ներկայիս՝ Եպիսկոպոս:

<sup>18</sup> Ներկայիս՝ Բերիոյ թեմի Առաջնորդ:

կողքեր (թիւ 6-8 միացեալ համարը): Կապի տուեալները՝ տեսն **«Դասկ»**: Կը բովանդակէ հայ համալսարանական երիտասարդին հետաքրքրող միւթեր, կրօնական բնոյթի գրութիւններ, լուրեր միութեան գործունէութենէն եւ այլն: Կը հանդիպին անգլերէն եւ ֆրանսերէն հրատարակումներ:

Թիւ 1-էն 4-ի արտաքին կողքերու տպագրութիւնը գունաւոր է:

**«Դասկ»**-ի եւ **«Դասկ Հայագիտական Տարեգիրք»**-ի նման, կը տպուի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի տպարանին մէջ:

Մինչեւ 1999 թուականը, 17 տարի լոյս տեսած է **«ԴԵԴՈՍ-ի Պարբերաբերք»** անունով:



**«ՄԱՐԶԻԿ»**.

«Մարզական ամսաթերթ»: Լոյս կը տեսնէ 1980-ի Յունուարին: «Հրատարակութիւն Հ. Մ. Ո. Մ.-

ի Կեդրոնական Վարչութեան»: Ունի ամսական կանոնաւոր պարբերականութիւն: Արտօնատըր՝ Վարդգէս Տէր-Կարապետեան. պատասխանատու տնօրէնի անուն չի նշուիր: Խմբագիրն է Վիգէն Աւագեանը, որու կ'օգնեն խմբագրութեան երկու անդամները՝ Իշխան Եղիայեանը եւ Սեդա Պեշլեանը: A-4: Շաալը փոփոխական է՝ 40-48 էջի սահմաններուն մէջ: Հեռաձայն՝ 248043, հեռապատճեն՝ 260117, փոստարկը՝ 80486, Պուրճ Համմուտ, Է. ճ. հ.՝ marzig@homenetmcentral.com: Կ'արտացոլէ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան աշխարհասփիւռ մարմիններու սկաւտական եւ մարզական գործունէութիւնը:

Պարբերականին տպագրութիւնը գունաւոր է:

**«ԱՅՅԻՐԻ»**.

«Ազգային-գրական-հասարակական շաբաթաբերք»: Կը վերահրատարակուի 1996 թուականէն: Փաստական պարբերականութիւնը՝ ամիսը երկու անգամ: Արտօնատըրը, պատասխանատու տնօրէնն ու խմբագիրն է **«Արարատ»**-ի երկարամեայ խմբագիր ժիւրայր Նայիրին (Թօսուեանն):

A-3: Ծաւալը փոփոխական է՝ 12-16 էջի սահմաններուն մէջ: Հեռաձայն 443454, 882730:

2002-ի վերջին օրերուն լոյս տեսա թերթին բացառիկ համարը՝ հանդէսի տեսքով, 23 x 35 սմ., 86 էջ, որու մէջ կան նաեւ արաբերէն, անգլերէն եւ ֆրանսերէն նիւթեր:

Թերթին ֆինանսապէս կ'օժանդակէ Մեծ Եղեռնի զոհերէն, բանաստեղծ Ռուբէն Սեւակի եղբորորդին՝ Յովհաննէս Զիլինկիրեանը:

**«Նայիրի»**-ն առաջին անգամ լոյս տեսած է 1941-ին, Հայէպի մէջ, Անդրանիկ Ծառուկեանի նախաձեռնութեամբ եւ խմբագրութեամբ: Հրատարակութիւնը շարունակուած է Պէյրութի մէջ, 1952-էն սկսեալ, շաբաթական կանոնաւորութեամբ, մինչեւ Լիբանանի 1975-ին սկսած քաղաքացիական պատերազմի առաջին ամիսները, ապա, ընդհատուածներով, մինչեւ 1983-ի Մարտ ամիսը: Երբ Ծառուկեան տեղափոխուեցաւ Բարիզ՝ թերթին հրատարակութիւնն ընդհատուեցաւ: Ժիրայր Նայիրի Ա. Ծառուկեանի ժառանգներէն զենց թերթին արտօնագիրը, որմէ ետք վերսկսաւ թերթին հրատարակութիւնը 1996-ին:

- **«ՋԱՆԱՍԵՐ»**. «Կրօնական-գրական-համարակական երկշաբաթաթերթ»: Կը հրատարակուի 1937-էն: Չյայտարարուած պաշտօնաթերթն է Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան: Փաստօրէն, լոյս կը տեսնէ երկու ամիսը մէկ անգամ չորսական միացեալ համարներով: Արտօնատէր Վեր. Ռաֆֆի Մսերլեան. պատասխանատու տնօրէնի անուն չի նշուիր. պատասխանատու խմբագիր՝ Երուանդ Քասունի: A-4: Ծաւալը կը տարուբերի 48-56 էջի սահմաններուն մէջ, ունի միասնական էջահամարակալում: Կապի տուեալները՝ տես **«Լոյս»**: Ջուտ կրօնական բնոյթի գրութեանց եւ համայնքի կեանքէն լուրերու կողքին զգալի տեղ կը գրաւեն համախայկական հարցերն ու Հայաստանի Հանրապետութեան հասարակական-քաղաքական կեանքի տեղեկատուական-վերլուծական հրապարակումները:

**«Ջանասեր»** կը տպագրուի «Եւունայթըտ Փրինթըրը»-ի կողմէ:

- **«ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՐՉԱԳԱՆԳ»**. «Մանկա-պատանեկան անսաբերթ»: Հիմնադրած է Վեր. Սանատ Ընորիօբեանը 1936-ին: «Սեփականատէր՝ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետ. Եկեղեցիներու Միութիւն: Հրատարակիչ՝ Մ. Ա. Գ. Ա. Ե. Մ.-ի Հրատարակչական Մարմին»: Փաստօրէն երկամսեայ է եւ լոյս կը տեսնէ միացեալ գոյգ համարներով: Արտօնագրման գործընթացի մէջ կը գտնուի: Պատասխանատու խմբագիր՝ Երուանդ Քասունի: A-5: 48 էջ, ունի տարեկան միասնական էջահամարակալում: Կապի տուեալները՝ տես **«Լոյս»**: Կը բովանդակէ պատմահիններուն եւ նորահաս երիտասարդներուն ընդհանուր եւ օգտակար գիտելիք ջամբող հրատարակումներ՝ հայոց եւ աշխարհի պատմութիւն, գիտութիւն, մշակոյթ, եւ այլն:

Կը տպագրուի «Եւունայթըտ Փրինթըրը»-ի կողմէ:

- **«ՍՓԻՈՔ»**. Ենթավերնագիր չունի: Կը վերահրատարակուի 1990-ի Յունուարէն: «Հրատարակութիւն Հայկական Ժողովրդային Շարժումի»: Պարբերակալութիւնն անկանոն է. 2002-ին լոյս տեսած է երեք անգամ միացեալ թիւերով (Յունուար-Մարտ, Ապրիլ-Յունիս, Յուլիս-Սեպտեմբեր): Արտօնատէր՝ Հայկական Ժողովրդային Շարժում, պատասխանատու տնօրէն՝ պատմագիտութեան թելեմաժու Գեորգ Եազըճեան: Խմբագիրի անուն թեւ չի նշուիր, սակայն **«Սփիոք»**-ը կը խմբագրէ Երեւանի Պետական Համալսարանի Բանասիրական Բաժանմունքի շրջանաւարտ, բանասիրական գիտութիւններու մագիստրոս Յովսէփ Արթինեանը: 20 x 27,5 սմ.: 32 կամ 40 էջ, կ'օգտագործուին նաեւ չորս կողքերը: Հեռաձայն-հեռապատճեն 749688, փոստարկը 113-7269, Համրա, Պէյրութ, Է. Ն. Կ. spurk@inco.com.lb: Իր հրապարակումներուն մէջ, «Սփիոք» զգալի տեղ կը յատկացնէ վերջին երեսնամեակի հայկական զինեալ ազատագրական պայքարին, մասնաւորաբար՝ Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակին ու յատկապէս անոր

գաղափարախօսութեան եւ պատմութեան: Զգալի այլ մաս մը նուիրուած է Հայաստանի Հանրապետութեան, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան եւ Սփիւռքի հասարակական ու քաղաքական կեանքին՝ պետական, կուսակցական, եկեղեցական եւ միութենական ղեկավարներու խիստ քննադատութեամբ:

**«Սփիւռք»**-ը, որպէս շաբաթթերթ, 1958-ին հիմնած եւ շուրջ 20 տարի խմբագրած ու հրատարակած է բազմավաստակ Սիմոն Սիմոնեանը: Լիբանանի քաղաքացիական պատերազմի 80-ական թուականներուն, **«Սփիւռք»** երեք անգամ լոյս տեսաւ հանդէսի տեսքով՝ Սիմոնեանի աներորդի, արծակագիր Գեորգ Աճեմեանի խմբագրութեամբ: Աճեմեան 1989-ին արտօնագիրը նուիրեց (ի՛ր իսկ որակումով՝ կտակեց) Հայկական ժողովրդային Շարժումին, որն ալ 1990-ի առաջին օրերէն վերականգնեց պարբերականին հրատարակութիւնը:

**«Սփիւռք»** կը տպագրուի «Էտվա»<sup>19</sup> տպարանին մէջ:

- **«ՈՒՍՏՄԻԿ»**. «Պաշտօնաթերթ Հ. Յ. Ղ. Լիբանանի երիտասարդական Սիւրբան»: 2002-ին լոյս տեսած է երեք անգամ. թիւ 13/15, Դեկտեմբեր 2001/Փետրուար 2002 նշումներով համարն ամբողջութեամբ նուիրուած է Ջաւախիքին: Միւս երկու թիւերը որեւէ նշում (ենթավերնագիր, թուական, հեթոսական թիւ, հրատարակիչ, խմբագիր եւ այլն) չեն կրեր: Լոյս կը տեսնէ 1983-էն: Արտօնատէր եւ պատասխանատու տնօրէն չունի: Խմբագրի անուն չի նշուիր: A-2: 16 էջ: Կապի միակ տունայն է Հ. Յ. Ղ. Լ. Ե. Մ.-ի կայքէջը՝ [www.lemagan.com](http://www.lemagan.com): Բովանդակած միւրերը առաւելաբար կը վերաբերին Հայ Դատին եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան:

Դատելով 2002-ի առաջին թիւի բովանդակութենէն անիկա պէտք է լոյս տեսած ըլլայ 2002-ի Յուլիսին. երկրորդ թիւը վաճառքի համուեցաւ 23 Դեկտեմբերին, երրորդը՝ 2003-ի Մարտին:

<sup>19</sup> Էտվա - Էտուարտ եւ Վարուժան Պօյաճեան եղբայրներու անուններու սկզբնատառերէն կազմուած յապաւում մըն է:

Շատ հաւանաբար, կը տպագրուի **«Ազգակ»**-ի տպարանին մէջ:

- **«ՏԵՂԵԿԱՏՈՒ ՔԱՂԸ»**. Ենթավերնագիրը անուան մաս կը կազմէ: Լոյս կը տեսնէ 1989-էն: Կը հրատարակէ «Լիբանանի Հայ Անկախներու Կեդրոն»-ի (անգլերէն յապաւումով՝ CAHL) ղեկավարութիւնը. «Կը հրատարակուի հաստատութեան տնօրէն Պր. Գեորգ Գարապոյաճեանի աշխատանքով ու հսկողութեամբ»: Պարբերականութիւնը՝ ամիսը մէկ անգամ: Ներհաստատութենական հրատարակութիւն մը ըլլալով՝ արտօնագիր եւ պատասխանատու տնօրէն չունի: Խմբագրի անունը չի նշուիր. շատ հաւանաբար կը խմբագրէ ՔԱՂԸ-ի տնօրէնը: A-4: 16 էջ. ունի տարեկան միասնական էջահամարակալում: Հեռաձայն՝ 260533/4, 266822, հեռապատճէն՝ 249479, փոստարկղ՝ 80250, Պուրճ Համմուտ, Է. Ա. Կ.՝ [cahl@cyberia.net.lb](mailto:cahl@cyberia.net.lb): Պարբերականը կ'արտացոլէ հաստատութեան կեանքը միայն:

Շատ հաւանական է, որ 2002 թուականին լոյս տեսած ըլլան եւս 1-2 միութենական-հաստատութենական պարբերականներ, զորս չենք տեսած: Շնորհակալ պիտի ըլլայինք, եթէ այդ կառոյցները կամ ընթերցողները այդ մասին մեզի տեղեկացնեն, որպէսզի ամբողջացնենք այս ցուցակը:

#### 9. ՌՍԱՆՈՂԱԿԱՆ-ՊՊՐՈՏՄԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

2002-ին, Լիբանանի մէջ գործեցին հայ աւետարանական համայնքին պատկանող Հայկազեան Համալսարանը եւ հայկական 33 կրթական հաստատութիւններ (դպրոցներ, արհեստից վարժարաններ, անկարներու եւ որբերու հաստատութիւններ, դպրեվանքեր): Համալսարանն ու կրթական հաստատութիւններէն շուրջ 10-ը հրատարակած են ուսանողական եւ աշակերտական-դպրոցական պարբերականներ: Կը խոստովանինք, որ մեր յետագայ ցանկը պակասաւոր է, եւ ուրախ կ'ըլլանք, եթէ մեզի տրամադրուի

համապատասխան պարբերականները խոստանալով անոնց առանձին յանելուածով մը անդրադառնալ:

Այս պարբերականները ներհաստաթուրքեմական հրատարակութիւններ ըլլալով արտօնագիր, հետեւաբար եւ պատասխանատու տնօրէն չունին:

Ցանկին մէջ օտարալեզու (մասնաւորաբար անգլերէն) պարբերականներու, հայերէնի կողքին անգլերէն անուն ունեցողներու, օտար լեզուներով բազմաթիւ հրատարակումներով պարբերականներու երեւոյթը կը բացատրուի Հայկազեան Համալսարանի ուսանողութեան կէսի եւ Հայ Աւետ. Քոլէճի աշակերտութեան որոշ տոկոսի արաբագոյի ըլլալով, ինչպէս նաեւ «համաշխարհայնացում» կոչուող, իրականութեան մէջ աներիկեան կենցաղի ու աշխարհայնացքի պարտադրման համայնակուլ եւ ազգակործան երեւոյթով, Լիբանանի մէջ հայոց ուժացման եւ ծովման գործընթացի արագացումով:

Ցաւալի է արձանագրել, որ մինչեւ 2000-2001-ը լոյս տեսած դպրոցական տասնեակ մը պարբերականներ ընդհատուած կան դադրած են 2002 թուականին:

Սրցանիշային է Հայ Աւետ. Քոլէճի պարբերական հրատարակութեանց թիւը 6 անուն պարբերական: Այս երեւոյթը պայմանաւորուած է Քոլէճի տնօրէն Զաւէն Մսրըլեանի<sup>20</sup> ժրաջանութեամբ եւ աշակերտութեան հետ փոխադարձ յարաբերութեանց առողջ հիմքերու վրայ հաստատուած ըլլալու փաստով:

<sup>20</sup> Զ. Մսրըլեանը 2003-ին արժանացաւ Հ. Հ. Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի պատուաւոր դոկտորի աստիճանին:

#### Գ 1. ՀԱՅԱՆՈՒՆ ԵՒ ԱՌԱՎԵԼԱՐԱՐ ՀԱՅՅԵՐԷՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՍԲ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

- **«ԱՆԻ»**. «Պարբերաբերք Հայ Աւետ. Քոլէճի Պատմութեան Ակումբի»: Լոյս կը տեսնէ 1965-ի Փետրուարէն տարին մէկ անգամ: 2002-ի թիւը կը կրէ Յունիսի Նշումը: «Խորհրդատու» տնօրէն Դոկտ. Զաւէն Մսրըլեան: A-4: 25 էջ: Օգտագործուած է թուրքին մէկ երեսը միայն: Կապի տուեալները տես քիչ վարը՝ **«Լրատու»**: Բովանդակութիւնը հայոց պատմութեան վերաբերեալ աշակերտներու պատրաստած հրատարակումներ:

- **«ԳԱՍՈՒՆ»**. «Պարբերաբերք Հայ Աւետ. Քոլէճի Հայկական Ակումբի»: Լոյս կը տեսնէ 1964-ի Յունուարէն տարին մէկ անգամ: Պատասխանատու հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցիչ, երեսնամի Պետական Համալսարանի Բանասիրական Բաժանմունքի շրջանաւարտ, բանասիրական գիտութիւններու մագիստրոս Արմէն Իւրմէշեան: A-4: 25 էջ. օգտագործուած է թուրքին մէկ երեսը միայն: Կապի տուեալները տես **«Լրատու»**: Բովանդակութիւնը աշակերտներու գրական փորձեր:



Արմէն Իւրմէշեան



- **«ԳԱՄԱՆ»**. «Տարեգիրք Դպրեվանուց Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ»: Կը հրատարակուի 1993-էն: Խմբագրական կազմ՝ Յովհաննէս Պոունուզեան, Գեորգ Փաշայեան, Անդրանիկ Գունանեան, Սիիրան Շէխուկեան, Հրայր Պետրոսեան եւ Կարապետ Քեչիչեան: 17 x 24 սմ.: 244 էջ: Հասցէ՝ Հայկական Դպրեվանք.

Ամերիյէ, Պիքֆայեայ: Կը բովանդակէ կրօնական գրութիւններ, գրախօսութիւններ, թարգմանութիւններ, դպրեվանքի կեանքէն լուրեր եւ այլն: Կան արաբերէն եւ անգլերէն սակաւաթիւ հրապարակումներ:

2002-ի թիւը լոյս տեսած է ամերիկահայ Օրդ. Արաքսի Պազալեանի ֆինանսական օժանդակութեամբ:

Պիքֆայեայի մէջ գտնուող դպրեվանքի այս հրատարակութիւնը կը տպագրուի Կաթողիկոսութեան Ամերիկասի տպարանին մէջ:

- **«ԹՈՒՉԲ».** «Տեղեկատու Հ[այ] Կ[աթողիկէ] Պատրիարքարանի Գ[եղորգ] Հարպոյեան Վարժարանի: Սկսած է լոյս տեսնել 1998-1999 ուսումնական տարին: Պարբերակաւորութիւնը տարին երկու անգամ: Խմբագիրներ՝ ուսուցիչներ Պր. Վահէ Էլմանեան եւ Օրդ. Անի Գարտաշեան: 23 x 31.5 սմ.: 8-12 էջ: Բովանդակութիւնը՝ դպրոցի կեանքին մասին նիւթեր, աշակերտներու գրութիւններ եւ այլն: Կան արաբերէն եւ անգլերէն նիւթեր:

- **«ԹՈՂՆՈՑ ԲՈՅՆ».** Ենթավերնագիր չունի: Կը հրատարակէ ճիւղէյի համանուն որբանոց-դպրոցը: Ա. տարի, թիւ 2 նշումով համարը կը կրէ Մայիս 2002 նշումը: Հաւանաբար՝ խմբագիրն է հաստատութեան տնօրէնը՝ Սեդրիկ Վրդ. Բարիքեանը:<sup>21</sup> A-4: 12 էջ + 4 կողմեր: Բովանդակութիւնը՝ «Թոշնոց Բոյն»-ի առօրեան, սաներու գրութիւններ, նուիրատուներու ցանկ եւ այլն:

- **«ԼՐԱՍՈՒ».** Անուան լրացումն է՝ «Հայ Աւետ. Քուլճի»: Լոյս կը տեսնէ 30 Յունուար 2000-էն: Պարբերակաւորութիւնը՝ ուսումնական տարուան ընթացքին երեք անգամ: Խմբագիրն է տնօրէն Դոկտ. Չաւեն Սարլեանը: 21 x 29 սմ.: Հեռաձայն՝ 349816, հեռապատճէն՝ 751469, է. ն. հ.՝ a-e-c@cyberia.net.lb, կայքէջը՝ www.greencedars.com.lb/wpf/aec: Բովանդակութիւնը՝ դպրոցին եւ շրջանաւարտներուն լուրերը:

<sup>21</sup> Ներկայիս՝ ծայրագոյն վարդապետ:

Տպագրութիւնը գտնուար է:

- **«ԿԱՐՄԻՐԵԱՆԸ ԱՅՍՕՐ».** Ունի նաեւ անգլերէն անուն՝



**«Կարմիրեան Թուսդէյ» (Guamirian Today),** ընդ որուն «Կարմիրեան» անուան տառերուն չափը շատ փոքր է եւ այն տպաւորութիւնը կը յառաջանայ, որ պարբերակաւոր անունը պարզապէս «Այսօր - Today» է: Կը հրատարակէ Գ. Բ. Ը. Ս.-ի Պօղոս Գ. Կարմիրեան Վարժարանի տնօրէնութիւնը (տնօրէն՝ Օրդ. Սարին Խաչիկեան): Առաջին համարը լոյս տեսած է 2002-ի սկիզբը, 2-րդը՝ Յունիսին: A-4: 64 էջ:

- **«ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅՍՈՒՅԱԿԱՆ ՀԱՆՂԷՍ».** Ենթավերնագիրը անուան մաս կը կազմէ: Լոյս կը տեսնէ 1970-էն: «Հրատարակութիւն Հայկազեան Համալսարանի Հայկական Բաժանմունքի» (այս նշումը անգլերէնով է միայն...): Լոյս կ'ընծայուի տարին մէկ անգամ: Արտօնագիր եւ պատասխանատու տնօրէն չունի: Պատասխանատու խմբագիրն է Հայր Անդրանիկ Ծ. Վրդ. Կռանեանը, աջակից ունենալով խմբագրական կազմը՝ Դոկտորներ Արտա Էքմեքճի, Արա Սանճեան, Արշալոյս Հ. Թովալեան, Պրնք. Ժիրայր Դանիլեան եւ Անդրանիկ Տազէտեան: A-4: 466 էջ: Հեռաձայն-հեռապատճէն՝ 349230/1/2, փոստարկը 11-1748, Պէյրութ, է. ն. հ.՝ review@haigazian.edu.lb, կայքէջ՝ www.haigazian.edu.lb: Բովանդակութիւնը՝ պատմա-բանասիրական յօդուածներ, գրախօսութիւններ, մահագրութիւններ:

Վերջին տարիներուն, հանդէսին հերթական համարը կը հրատարակուի յաջորդ տարի՝ նախորդ տարուան թուակաւով: Հետեւաբար, վերոնշեալ տուեալները կը վերաբերին 2001 թուականը կրող 21-րդ հատորին, որը լոյս տեսաւ 2002-ի գարնան:

- **«ՃԱՌԱՎԱՅՑ»**, Կը հրատարակէ Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Քոլէճի տնօրէնութիւնը (տնօրէն՝ Պր. Յակոբ Բագրատունի): Առաջին համարը թեւ կը կրէ 2001-ի Դեկտեմբերի մշումը, սակայն լոյս տեսած է յաջորդ տարուան սկիզբը: Հաւանաբար՝ կը խմբագրէ տնօրէնը: A-3: 12 էջ: Բովանդակութիւնը՝ դպրոցի կեանքը, աշակերտական գրութիւններ եւ այլն: Կը հանդիպին անգլերէն ճիւղեր:



# ՃԱՌԱՎԱՅՑ

ՄԵՍՐՈԲԻԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2002-ին լոյս տեսած է երեք համար:

**«Ճառագայթ»**-ը յաջորդած է կրթօճախի **«Մեր Չայնը»** պարբերականին:

- **«ՄԵՆՐՈՊԵԱՆ ԼՐԱԲԵՐ»**. Ունի նաեւ անգլերէն անուն՝



**«Մեսրոպեան Մեսենճըր»**  
(**Mesrobian Messenger**):

Ենթավերնագիր չունի: Լոյս կը տեսնէ 2001-ի Նոյեմբերին:

Պարբերականութիւնը

անկանոն է. թիւ 3-ը՝ Յունուար-Փետրուար 2002, թիւ 4-ը՝ Մարտ-Մայիս 2002, Բ. տարի թիւ 1 (16)-ը՝ Հոկտեմբեր 2002: «Հրատարակութիւն Հայ Կաթ. Մեսրոպեան Բարձրագոյն եւ Արուեստից Վարժարաններու»: Պատասխանատու խմբագիրն է դպրոցի ուսուցիչներէն Պր. Վարդան Թաշճեանը: A-4: Էջաքանակը փոփոխական է՝ 22-24 էջի սահմաններուն մէջ: Հեռաձայն՝ 260504, հեռապատճէն՝ 262955, է. ց. հ.՝ messenger-editor@mesrobian.com, կայքէջ՝ www.mesrobian.com: Բովանդակութիւնը՝ դպրոցներու առօրեան, աշակերտական գրութիւններ: Կան անգլերէնով փոքրաթիւ հրապարակումներ:

- **«ՋԱՀՅԱԿԻՐ»**. Ենթավերնագիր չունի: Սկսած է լոյս տեսնել 1945-ին՝ որպէս «Համազգային»-ի Նշան Փալանճեան ճեմարանի ամսաթերթ: 1975-էն սկսեալ կը հրատարակուի տարին մէկ անգամ: Հրատարակութիւն «Համազգային»-ի Մելանթոն եւ Հայկ Արվանան ճեմարանի: Կը խմբագրէ ճեմարանի աշակերտներէն քաղկացած խմբագրակազմը: 2002-ի թիւը՝ 17 x 24 սմ.: 102 էջ: Հեռաձայն՝ (04) 712602/3/4, (03) 290960, հեռապատճէն՝ (04) 712601, փոստարկը 70-1028, Աճախ, է. ց. հ.՝ djemaran@inco.com.lb, կայքէջ՝ hamazkayin.com: Բովանդակութիւնը՝ աշակերտներու գրական, գիտական եւ հրապարակախօսական փորձեր, ծիծաղ: Կան արաբերէն, անգլերէն եւ ֆրանսերէն հրապարակումներ:

Տպագրուած է «Համազգային»-ի «Վահէ Սէթեան» տպարանին մէջ:

- **«ՄԻՓԱՆ»**. «Հայ Աւետ. Քոլէճի տարեգիրք»: Լոյս կը տեսնէ 1964 թուականէն, տարին մէկ անգամ եւ կրթօճախին պաշտօնական հրատարակութիւնը կը համարուի: Խմբագրութեան պատասխանատուն է տնօրէն Դոկտ. Զաւեն Մսրղեանը: 22 x 30 սմ.: 64 էջ: Կապի տուեալները՝ տես **«Լրատու»**: Բովանդակութիւնը կ'արտացոլէ քոլէճին կեանքը՝ ամբողջ ուսումնական տարուան կտրուածքով:

- **«ՍԼԱՅՔ»**. «Անարատ Յղութեան Միաբանութեան Կաթողիկէ Հայ Բոյրերու Սրբոց Հոփսիմեանց Վարժարանի տարեգիրք»: Լոյս կը տեսնէ 1995-էն՝ տարին մէկ անգամ: Խմբագրակազմը կը զխաւորէ Միաբանութեան մեծաւորուիին: Բովանդակութիւնը՝ դպրոցին կեանքը, աշակերտներու գրութիւններ եւ այլն:

## 9. 2. ԱՆԳԼԵՐԷՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

- «ԻՆ ՍԻՆԶ» - **IN SYNC**. «Կահան թեքեան Միջնակարգ Կարծարանի Անգլերեն Ակումբի հանդես»: Լոյս կը տեսնէ հաւանաբար 2000 թուականն (մեր տեսած 3-րդ տարի, թիւ 5 համարը կը կրէ Յունուար 2002 ճշումը): Գլխաւոր խմբագիր՝ ուսուցչուհի Օրոյ Լեւա երեցեան: A-4: 26 էջ + 4 կողքեր: Բովանդակութիւնը՝ աշակերտներու եւ շրջանաւարտներու գրութիւններ, Ակումբի գործունէութեան լուրեր:

- «ԳԱՏԿԱՁԵԱՆ ԴԵՐԸՏ» - **HAIGAZIAN HERALD**. Կը հրատարակէ Հայկազեան Համալսարանը: Պարբերակաճութիւնը անկանոն է՝ տարին 3-4 թիւ: Կապի տուեալները՝ տեսնել «Հայկազեան Հայագիտական Հանդէս»: Կ'արտաջղէ համալսարանի ընթացիկ կենսընդհանուր պատկերը:

- «ՓԵԶ» - **PEC**. Անունը «Փերիտիքըլ օֆ տը Ինկլիշ Բլապ» («Անգլերենի Ակումբի Պարբերական») ամբողջական անուան յապաւումն է: Լոյս կը տեսնէ 1963-ի Դեկտեմբերին տարին մէկ անգամ: Կը հրատարակէ Հայ Աւետ. Քոլէճի Անգլերենի Ակումբը: 2002-ի թիւը կը կրէ Յուլիսի ճշումը: Խմբագիրի անուն չէ ճշուած: A-4: 45 էջ, օգտագործուած է թուղթին մէկ երեսը միայն: Կապի տուեալները՝ տեսնել «Լրատու»: Բովանդակութիւնը՝ տարբեր նիւթերու շուրջ աշակերտական գրութիւններ:

- «ՖՈՔՈՒՍ» - **FOCUS**. Հայկազեան Համալսարանի տարեգիրք: Հրատարակչական տուեալներ չկան: 20 x 29 սմ.: 136 էջ: Կապի տուեալները՝ տեսնել «Հայկազեան Հայագիտական Հանդէս»: Գունաւոր լուսանկարներով մէկ առ մէկ կը ներկայացնէ բոլոր ուսանողները, դասախօսներն ու պաշտօնէութիւնը, համալսարանին իսկապարտ կենսը:

Գունաւոր եւ գեղատիպ հրատարակութիւն մըն է:

## 9. 3. ԱՐԱՐԵՐԷՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

- «ՍԱՍԱ ԱԼ-ՅՈՒՍԷՒՄ». Անունը արաբերէնով կը թարգմանուի «Ուսանողներու Արծազանգը»: Լոյս կը տեսնէ 1963 Դեկտեմբերին տարին մէկ անգամ: Կը հրատարակէ Հայ Աւետ. Քոլէճի Արաբերենի Ակումբը: Աշակերտներէ բաղկացած խմբագրակազմ: A-4: 38 էջ, օգտագործուած է թուղթին մէկ երեսը միայն: Կապի տուեալները՝ տեսնել «Լրատու»: Բովանդակութիւնը՝ տարբեր նիւթերու շուրջ աշակերտական գրութիւններ:

Այս ցանկին առթիւ կարելի է անցնել նաեւ հետեւեալները.

- Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հռչակման 11-ամեակին առթիւ, Լիբանանի մօտ Հ. Հ.-ի դեսպանութիւնը (արտակարգ եւ լիազօր դեսպան՝ Պր. Արեգ Յովհաննիսեան), լիբանանեան անգլերէն միակ օրաթերթ **«Տը Տէյի Սթար»**-ի (*The Daily Star*) յատուկ թողարկում-ներդիրի կարգավիճակով լոյս ընծայեց 26 Սեպտեմբեր 2002 թուականը կրող **«ԱՐՄԵՆԻԱ - ARMENIA»** անգլերէն թողարկումը, որը ծրագրէ բաժնուեցաւ թերթի այդ օրուան համարին հետ: A-2: 6 էջ: Արտաքին էջերուն տպագրութիւնը՝ գունաւոր: Բովանդակութիւնը՝ Հայաստանի Հանրապետութիւն - Լիբանան յարաբերութիւններու պատմութենէն նիւթեր եւ անոնց ներկայ վիճակը, Հ. Հ.-ի մէջ մշակոյթը, գիտութիւնը, բարձրագոյն կրթութիւնը, տնտեսութիւնը եւ հայկական սփիւռքը, ծանուցումներ:

- «Ձարթօնը» օրաթերթի 22 Դեկտեմբեր 2002-ի թիւին մէջ, Մ. Կ. ստորագրութեամբ գրութեան մէջ կը յայտնուէր, թէ «Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն»-ի (Բարիզ) երեսնեան **«Արմենիա - Armenia»** ամսագիրը (գլխաւոր խմբագիր՝ Համօ Սոսկոֆեան) «սահմանափակ քանակով պիտի վաճառուի լիբանանահայ գրատուներուն մէջ»: Այսուհանդերձ, **«Արմենիա»**-ն այդպէս ալ չյայտնուեցաւ լիբանանահայ գրատուներուն մէջ:



- 2003-ի գարնանը լոյս տեսաւ «Լիբանանահայ Օգնութեան Խաչ»-ի Շրջանային Վարչութեան 2002-ի «ՏԵՂԵԿԱՏՈՒ» տարեգիրքը՝ A-4 չափի շուրջ 100 էջ ծաւալով:

**ՇԱՏ ԴԱՄԱՌՈՑ ՑԱԻԵԼՈՒԿԾ -**

**ՆՈՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԳՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 2003-2004-ԻՆ**

- «ԱԶՂԱԿ» **ամսաթերթ**. Լոյս կը տեսնէ 2003-ի սկիզբէն, ամիսը մէկ անգամ: A-4: 24 էջ:

- «Մետրոպէան Լրաբեր»-ի Յունուար-Փետրուար 2003-ի համարէն կ'իմանանք, թէ Այնճարի հայ կաթողիկէ ժողովրդապետ Գայր Մետրոպ Վրդ. Թովալեան (Մետրոպ Գայունի) լոյս ընծայած ու խմբագրած է «ՄՈՒՄԱԼԵՌ» թերթի առաջին թիւը:

- «ՁԱՐԹՕՆԵ» **ամսաթերթ**. Լոյս կը տեսնէ 2004-ի Մարտէն, արաբերէնով, ամիսը մէկ անգամ, հայերէն «Ձարթօնը» օրաթերթի յաւելուածի կարգավիճակով: A-4: 16 էջ:

- 2004-ի գարնան վերջին լոյս տեսաւ «ԾԱՂԻԿ» գրական թերթին առաջին թիւը: Նախաձեռնող ու խմբագիր՝ Պր. Յակոբ Տիւնեայեան:

- 2004-ի Սեպտեմբերի աւարտին, վեց տարուան ընդհատումէ ետք լոյս տեսաւ Թեքեան Սշակութային Միութեան Լիբանանի Վարչական Խորհուրդի «ՇՌՊԱԿ» գրականութեան եւ արուեստներու հանդէսը: Պատասխանատու խմբագիր՝ Արա ճուհարեան, օգնական՝ Տիկ Զեփիւն Թամէրեան, խմբագրակազմի երրորդ անդամ՝ Պր. Գրայր Կարապետեան: Գունաւոր եւ գեղատիպ տպագրութիւն:

- «Շիրակ»-ի վերահրատարակմանն առնչուած խարդաւանքներէ խրտչած, ամսագիրի նախկին խմբագրակազմի անդամ Պր. ժիրայր Դանիլեան 2004-ի աշնանը գործօն քայլերու դիմած է վերահրատարակելու համար շուրջ երեք տասնամեակ առաջ ընդհատուած/դադրած «ԵՐԻՏԱՍԱՐԿ ԴԱՅ» ամսաթերթը:

Գեորգ Եազըճեան

([keyaz2002@yahoo.com](mailto:keyaz2002@yahoo.com))

Երեւան, 30 Նոյեմբեր 2004